

Մ Ի Ն Ա Ս Վ Ր Գ . Ա Մ Գ Ե Յ Ի  
Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Ե Մ Ի  
(1630—1704 Նոյմբ. 24)

- Մինաս Վրդ. Ամդեցիի մասին գրած են ժամանակին՝
- Հ. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, Հտ. Գ., էջ 733—743.
- Տ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, 1872, նոյնը աշխարհաբար 1931.
- Ա. Եպս. Տէր Յովհաննէսեանց, Ժամանակագրական Պատմութիւն Ս. Երուսաղէմի, 1890, Հտ. Ա., էջ 415—429.
- Լէօ, Հայկական տպագրութիւն, Հտ. Ա., էջ 258—288.
- Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Եւրոպայի, Գահիրէ, 1952, էջ 646.
- Հ. Ն. Ակինեան, Մինաս Ամդեցի Պատրիարք

- Երուսաղէմի, ՀԱ., 1960, թիւ 7—9, էջ 321—360.
- Գ. Գէորգեան, Ճշդումներ Մինաս Ամդեցիի մասին, Բաղմ. 1966, թիւ 7—8, էջ 193—197, 235—238: Եւ ուրիշ հեղինակներ:
- Հ. Ն. Ակինեան իր վերոյիշեալ յօդուածին մէջ, մի քանի անտիպ տաղեր ալ, յօրինուած Մինաս Ամդեցիին, լոյս հանեց:
- Մենք հոս կը դիտենք առաւելապէս վեր հանել Մինաս Վրդ. Ամդեցիին մէջ հայ եկեղեցականի անձը, հայ Եկեղեցւոյ հոգեւորականը, մէկ քանի ժամանակակից հեղինակաւոր անձերու եւ իր իսկ անտիպ թուղթերուն լոյսով:

- ՄԱՏՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ
- ԱՂԲԻՐՆԵՐ ԴԻՒԱՆԱԿԱՆ
- AP. Acta, = Archivio de Propaganda Fide, Acta.
- AP. Congr. Gen. = Congregazione Generale
- AP. Congr. Part. = Congregazione Particolare
- AP. Lett. Volg. = Lettere Volgari
- AP. S O C G. = Scritture Originali riferite nelle Congregazioni Generali
- AP. SC = SO = Scritture Originali riferite nei Congressi
- AP. Lett. Div. Ling. = Lettere diverse lingue
- AP. Misc. = Miscellanea
- AV. = Archivio Vaticano

- ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ
- Ե 8 2. — Պողարեան Ն. Եպս., Մայր Յուցակ Սրբ. Յակոբեանց, Երուսաղէմ 1966—1979, Հտ. Ա—Թ.
- Մ 8 2. — Պողարեան Ն. Եպս., Մայր Յուցակ Սրբ. Յակոբեանց, Երուսաղէմ, տպ. 1953—1954, հտ. Բ—Ե.
- Մ 8 2 Ե. — Սիւրմէեան Ա. Եպս., Մայր Յուցակ Ձեռագրաց Երուսաղէմի, Վենետիկ 1942.
- Մ Մ 8 2. — Յուցակ Ձեռագրաց Մաշտոցի Անուան Մատենադարանի, Երեւան 1966—1970.
- Ս 8 2. — Գուշակեան Թ. Եպս., Յուցակ Հայերէն Ձեռագրաց Սեբաստիոյ Ս. Նշան Վանքի, Վիեննա, 1961.
- Ե 2 Գ. — Նշանեան Մ. Եպս., Օրագրութիւն երեմիա Չէլիպի Բէտմիւրեանի, Երուսաղէմ 1939.
- Ե 2 Գ. ՍՊ. — Ստամպոլոյ Պատմութիւն, Տօքթ. Թորգոմեան, Վիեննա 1913, Ազգ. Մտն. 71.
- Ստ. Լեհ. Տար. — Ստեփանոս վրդ. Ռոշքայ, Ժամանակագրութիւն կամ Տարեկանք Եկեղեցականք, Հր. Հ. Հ. Ոսկեան, Վիեննա, 1964.

- Սիւր. Լեհ. Ուղ. — Սիւրմէեան Լեհացի, Ուղեգրութիւն, Հր. Ակինեան Հ. Ն., Վիեննա 1936, Ազգ. Մտն. 141.
- Մ Ժ. — Վ. Ա. Յակոբեան, Մանր ժամանակագրութիւններ, Երեւան 1951 Հտ. Ա., 1956 Հտ. Բ.
- Առ. Դաւ. — Առաքել Դավրիթեցի, Պատմութիւն, Վարչապատ 1884.
- Գր. Դար. Ժամ. — Գրեգոր վրդ. Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Հր. Նշանեան Մ. Եպս., Երուսաղէմ 1915.
- Ալ. Այր. — Ալիշան Հ. Ղ., Այրաբատ, Վենետիկ 1890.
- Ալ. Մն. — Ալիշան Հ. Ղ., Սիսուան, Վենետիկ 1885.
- Ալ. ՄիՍ. — Ալիշան Հ. Ղ., Սիսական, 1893.
- Ալ. ՀՊՄ. — Ալիշան Հ. Ղ., Հայապատում, Վենետիկ 1901.
- Ալ. Կամ. — Ալիշան Հ. Ղ., Տարեգիրք Հայոց, Վենետիկ, 1896.
- Հյ. — Ալիշան Հ. Ղ., Հայկարան, (Ձեռագիր) Մտնդ. Մխիթարեանց Վենետիկ.
- Անանուն, Յուշեր — Եր. Կոմիտաս քհն. Քէօմիւրճեան (Ձեռագիր), Մտնդ. Մխիթարեանց Վենետիկ.
- Թորոս Աղբար, Սրուանձտեանց Գ. Եպս., Կ. Պոլիս 1897.
- Տէր Յովհաննէսեանց Ա. Եպս., Ժամանակագրական Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղէմ 1892.
- Սաւալանեանց Տ., Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղէմ 1872.
- Ակինեան Հ. Ն., Մովսէս Գ. Տարեացի, Վիեննա 1936, Ազգ. Մտն. ճԼԹ.
- Չամչեան Հ. Մ., Պատմութիւն Հայոց, Վենետիկ 1786.
- Ամատունի Կ. Եպս., Ոսկան վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը, Վենետիկ 1975.
- Cl. Galano, «Conciliationis Ecclesiae Armenae cum Romana» Romae 1650.
- G. Hofmann, «Il Vicariato Apostolico di Constantinopoli» (1453—1830), Roma 1935.

Գ. Գէորգեան իր վերոյիշեալ յօդուածին մէջ կ'որակէ զինքը «Միջին դարու հայ հոգեւորականութեան ամէնէն հետաքրքրական դէմքերէն մէկը»։ Մենք պիտի ըսէինք ԺԵ. դարու կարկառուն հայ եկեղեցականներէն մէկը։

Գ Լ Ո Ւ Ն Ա .

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐԶԱԳԻՐՆԵՐՈՒ ՏՈՒՆԱԼՆԵՐՈՎ

Մինաս Վրդ. Ամդեցիին, երբեմն Համբեցի ալ գրուած նախնեաց մօտ, ծնած է Տիգրանակերտ՝ այս է Ամիդ, շուրջ 1630ին. այս պատճառով կոչուած է Ամիդեցի։

Գրչագիրներու եւ Չնքուչի Սիրահայեացին պատմիչ Մովսէսի վկայութեամբ՝ հայրը Առաքել կը կոչուէր, մայրը Հովիտիմէ, որ վաղամեռիկ եղած է։ Չնքուչի Սառա զատուր անունով մէկը որդեգրած է փոքրիկ Մինասը, եւ անոր կրթութիւնը յանձնուած է նոյն քաղաքի Սիրահայեաց Ս. Աստուածածին վանքին Առաջնորդ՝ Մարկոս Վարդապետին<sup>1</sup>։

Ամդեցիին 1655 թուին իր այս դաստիարակին ձօնած տաղին մէջ, թէեւ Ամիդ է քաղաքս, սակայն Չնքուչին միայն բարիք տեսայ, կը գրէ։

ԿՈՒՍԱԿՐՕՆ ՔԱՀԱՆԱՅ

Իր Վարդապետը, Մարկոս Չնքուչեցին, զինքը կուսակրօն քահանայ ձեռնադրած է, անշուշտ Սիրահայեացի վանքը։ 1675ի տաղահափեալ Սաղմոսարանին Յիշատակարանը, հեղինակուած Յակոբ Քհչյ. Թոխաթեցիին, զոր Պոլիս գրչել տուած էր նոյն ինքն Մինաս Ամդեցիին, կը վկայէ. «Յիշեցէք զՄարկոս Վրդ.ն, որ է ուսուցիչ եւ ձեռնադրող եւ խըրատող ստացողի գրոցս՝ Մինաս Վարդապետի»<sup>2</sup>։

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՒԱԶԱՆ

1655 թուին ընդունած է Վարդապետական դաւազան, նոյն Մարկոս Վրդ.էն, որուն

<sup>1</sup> ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Մինաս Ամդեցի Պատրիարք Երուսաղէմի, ՀԱ., 1960, թիւ 7—9, էջ 321—360:  
<sup>2</sup> ՊՈՂԱՐԵԱՆ ԵՊՄ. ՆՈՐԱՅՐ, Երուսաղէմի Յուցակ Ձեռագրաց (յեւ այսու եՑՁ), Հտ. Գ., էջ 400, Ձեռ. թիւ 892:

աշակերտը ճանչցած է միշտ ինքզինքը Ամդեցիին՝ երախտագիտական զոացումներով, եւ իր կողմէ օրինակել տուած բոլոր գրչագիրներուն մէջ՝ զանց չէ ըրած յիշատակել ու աղօթք յանձնարարել իր հոգեւոր ծնողքին Մարկոս Վրդ.ին համար<sup>3</sup>։

1655 թուականին ալ, վարդապետական իշխանութեամբ ճոխացած, նոյն թուականով ձուլել տուած է իր պաշտօնական կնիքը, ըստ ընկալեալ սովորութեան։ Անդրանիկ առաքելութիւնը, իբր Վարդապետ, կը թուի եղած ըլլայ Ուրհա (Եղեախ) քաղաքը, 1656ին։ Այս քաղաքին, 1657 թուին, նուիրած տաղահափեալ Գիր Օրհնութեանը ցոյց կու տայ թէ լաւ ծանօթացած է տեղւոյն ըլլայ եկեղեցական թէ աշխարհական դասակարգին հետ ու զանոնք գնահատած է։

Յիշատակարանէ մը կը տեղեկանանք թէ 1660ին Չնքուչի Սիրահայեաց վանքը կը դառնուէր։ Խորով Անձեւացիի Մեկնութիւն ժամակարգութեան գրչագիրն է, որուն ըսկիցը կայ իր 1655ի կնիքը, եւ կ'ըսուի «կազմեցաւ վերստին... ձեռամբ Մինաս բանի ըսպասաւորի, ի յԱռաջնորդութեան Շէնքուչանահի Մարկոս աստուածաբան Վրդ.ի... ի թուին ՌՃԹ (1660)»։ ու կարդացողներէն կը խնդրէ յիշուիլ Աստուած ողորմիով մը<sup>4</sup>։

1664 թուի Յիշատակարանէ մը կ'իմանանք իր Եւրոպիա երթը, ուր կողոպտուած է իր բոլոր ունեցածներէն, բացի Աստուածաշունչէն, որ իր Վարդապետին կողմէ տրուած նուէր մըն էր<sup>5</sup>։

Այս Յիշատակարանը զանց չէ ըրած ակնարկել եկեղեցական դէպքի մը, որ սոյն տարիներուն այնքան աղմուկ հանեց Հայաստանեայց Եկեղեցիին մէջ, այն է Եղիազար Վրդ. Այնթապցիին Կաթողիկոս օծուիլը. «Գրեցաւ Յիշատակարանս ի թուին Հայոց ՌՃԹԳ ամին (1664), յորում Եղիազար Վրդ.ն Երուսաղէմի Կաթողիկոս ձեռնադրեցաւ ի քաղաքն Հաւապ, ի Սառա զատուր Կաթողիկոսէն Սոյ, ի Ս. Քառասունք եկեղեցի»<sup>6</sup>։

Բարոյական կապ մը կը զուգէր Ամդեցի Մինասը Եղիազար Այնթապցիին։ Երկուքն ալ միեւնոյն Վարդապետարանէն ելած էին, Չնքուչի Սիրահայեաց վանքէն։ Եղիազար

<sup>3</sup> ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., անդ, էջ 332:  
<sup>4</sup> ԵՑՁ, Հտ. Գ., Ձեռ. թիւ 1253:  
<sup>5</sup> ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՅ Գ., Թորոս Աղբար, Բ., էջ 464—465:  
<sup>6</sup> Անդ, էջ 464—465:

սորված էր առ ոտս Յովհաննէս Վրդ. Չըն-  
քուչցիի, իսկ Մինաս՝ Մարկոս Վրդ. Չըն-  
քուչցիին, որ նախորդին աշակերտ եղած էր  
եւ աշակերտակից էր Եղիազարի<sup>7</sup>: Կարծէք  
այս բարոյական կապը կը բացատրէ թէ ինչու  
Մինաս Ամղեցիին չունի մեղադրանք Եղիազար  
Այնթապցիի ինքնագլուխ Կաթողիկոս հրո-  
շակուելուն, երբ Ս. Էջմիածին կը նստէր  
օրինաւոր Ամենայն Հայոցը, Յակոբ Զուղա-  
յեցիին:

**ԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԵՆՆԱԳՐՈՒԻԼԸ**

Մինաս Վրդ. Ամղեցիին, ուրիշ երկու  
թեկնածուներու հետ միասին եպիսկոպոս  
ձեռնադրուած է Երուսաղէմի Ս. Յակոբեանց  
տաճարը, 1666ին, հակաթու Եղիազար Կա-  
թողիկոսէն: Այս եւս ցոյց մը թէ համախոհ  
էր իրեն: Միւս երկու օժակիցները, ինչպէս  
կը գրէ Մ. Եպս. Նշանեան, էին Եղիա Վրդ.  
Նիկողեան եւ Պօղոս Վրդ., որոնց մասին  
ուրիշ առիթով պիտի գրենք<sup>8</sup>:

Իսկապէս ալ, ժամանակակիցներու վը-  
կայութեան համաձայն, Մինաս Ամղեցիին կը  
տեսնենք այնուհետեւ իբրեւ մէկը դարուն  
հայ եկեղեցականներէն որոնք սերտ կերպով  
յարած են Եղիազար Կաթողիկոսի անձին,  
նաեւ անոր նախ քան օրինապէս Ամենայն  
Հայոց Աթոռը նստիլը, Ս. Էջմիածին: Այնու-  
հետեւ ալ հաւատարիմ մնաց մինչեւ անոր  
մահը: Ասոր կը վկայեն ժամանակակից շատ  
մը Յիշատակարաններ, թէ Մինաս Ամղեցիին  
24 տարիներ բովանդակ, (ուրիշներու համա-  
ձայն 22 տարի) ծառայած է Եղիազար Կթղս.  
Այնթապցիին, Երուսաղէմ եւ Էջմիածին, որ  
կը գրէ իր Եպիսկոպոս ձեռնադրուելու տա-  
րիէն մինչեւ Եղիազարի մահը (+1692):

Կը թուի թէ Մինաս Ամղեցիին, հակաթու  
Կաթողիկոսին հանդէպ իր այս յարումին ի  
չքմեղանս, մինչդեռ տակաւին կար օրինաւոր  
դահակալը, այն դեղեցիկ տաղին, զոր ան-  
շուշտ գրած է Յակոբ Զուղայեցիին մահէն  
վերջ, եւ որ կը սկսի «Յակոբ Հայոց Կաթո-  
ղիկոս»ով, վերջին տան մէջ թողութիւն կը  
խնդրէ հանգուցեալ լուսահոգիէն, սա բառե-  
բով:

«Միրտ իմ առ քեզ ազազակէ,  
Եւ թողութիւն ի քէն խնդրէ,

<sup>7</sup> Անդ, էջ 485—486:  
<sup>8</sup> ՆՇԱՆԵԱՆ ԵՊՄ. Մ., Օրագրութիւն Երեմիա  
ՁԷԼԵՎԻ ԳԵՄԻՆԻԱՆԻ (յետ այսու ԵԶԳ), Երուսա-  
ղէմ, 1939, էջ 28—29. ծնթ. 1:

Դու ողորմեա եւ խնայէ,  
Եւ թողութիւն մեզի շնորհէ»<sup>9</sup>:

Յակոբ Զուղայեցիին, անյիշաչար Հայրա-  
պետը, որ մահէն առաջ ալ հաշտուած էր  
հակաթու Եղիազարին հետ, դիտենք որ իր  
մահուան անկողինին մէջ արձակեց կանոնա-  
կան կապէ բոլոր անոնք որ իր կենդանու-  
թեան խարած էր նդովքի դատակնիքով:

Տասնամեայ մը եւ աւելի, 1666 թուակա-  
նէն սկսեալ, Ամղեցիին կենսագրութեան մա-  
սին մեզի կը պակսին մանրամասնութիւններ:  
Եպիսկոպոս ձեռնադրուելէն վերջ դիտենք թէ  
Երուսաղէմ Եղիազարի գործակցած է:

1675 թուին, Եղիազար իբր Պատրիարք  
Երուսաղէմի, Մինաս Վրդ. Պոլիս զրկած է  
ուխտաւորական կարաւան առաջնորդելու  
համար դէպի Ս. Քաղաքը: Այս առիթով է որ  
Պոլիս օրինակել տուած է Յակոբ ՔՀյ. Թո-  
խաթեցիի տաղաչափեալ Սաղմոսարանը<sup>10</sup>:

**ԱՌԱՋՆՈՐԴ ԶՆՔՈՒՇԻ ՍԻՐԱՀԱՅԵԱՑԻՆ**

1679 թուին, երբ վախճանած էր Չնքուչի  
Առաջնորդ Մարկոս Վրդ., կը գրէ Մովսէս  
տեղւոյն պատմիչը, Սիրախայեացի Առաջնոր-  
դութիւնը ժառանգած է Մինաս Վրդ. Ամղե-  
ցիին, հանգուցեալին աշակերտը<sup>11</sup>:

Գառնիկ Գէորգեան, Արշակ Ալլոյա-  
ձեանի դէմ հակաձառելով, կը պաշտպանէ  
թէ Մինաս Ամղեցիին 1666ին Եպիսկոպոս ձեռ-  
նադրուած էր իբրեւ Առաջնորդ Եւզոկիոյ:  
Կը գրէ թէ Մինաս Վրդ. ի երկու աշակերտնե-  
րը, Միքայէլ Թոխաթեցի եւ Մկրտիչ Զուղա-  
յեցի, ի հաշիւ իրենց Վարդապետին օրինա-  
կած ձեռագիրներուն մէջ ունին Յիշատակա-  
րաններ, որոնց մէջ զինք կը ճանչան  
իրբ «Արքեպիսկոպոս Եւզոկիակերտի» կամ  
«Առաջնորդ Թոխատու» մինչեւ 1696 թուա-  
կանը: Եւ թէ Եւզոկիա կեցած է Մինաս Վրդ.  
մինչեւ 1674 թուականը<sup>12</sup>:

Մենք Օրագրութիւն սղաղիր Օրինակին  
վրայ յեցած՝ պիտի ըսենք որ Եւզոկիոյ վրայ  
իր պաշտօնապէս Առաջնորդ անուանումը  
պէտք է զննք Եղիազար Կաթողիկոսին  
Ս. Էջմիածին հաստատուելու թուականին,  
1682ին:

Յիշուած Օրագրութիւն զրուածքին մէջ,  
1685 Նոյեմբ. Յին կը կարդանք թէ Մինաս

<sup>9</sup> ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., անդ, էջ 339:  
<sup>10</sup> ԵՅՁ, հտ. Գ. էջ 400, Ձեռ. թիւ 892:  
<sup>11</sup> Թորոս Աղաք, Բ., էջ 458—459:  
<sup>12</sup> Բազմ. 1966, էջ 235—236:

Վրդ. Էջմիածնէն կը մեկնի Առաջնորդական  
պաշտօնով դէպի Եւզոկիա, եւ ուր մնացեր է  
մինչեւ 21 Յունուար 1688, այցելելով թեմին  
զանազան կեդրոնները կամ ծուխերը<sup>13</sup>:

Իրապէս 1684ի Աւետարանի մը Յիշատա-  
կարանը, գրուած Եւզոկիա, Մկրտում սար-  
կաւագէն, ի վայելումն մահտեսի Ներսէսի,  
կը գրէ՝ ի ժամանակ Եղիազար Կաթողիկոսի  
եւ «ի հովուապետութեան նահանգիս Տեառն  
Մինասայ աստուածարան Վրդ. ի, ի քաղաքս  
յԵւզոկիա, ընդ հովանեաւ Սրբոյն Սարգսի  
Զօրավարին, որ եւ Թախտր Ղալայ կոչի»<sup>14</sup>:

1687 թուին, Մինաս Վրդ. Մկրտում  
Զուղայեցիին օրինակել տուած է Սարգիս  
Շնորհալիի Մեկնութիւն Կաթողիկեայցը,  
Միքայէլ Բարդամի որդին ալ զայն կը ծաղկէ:  
Ակինեանի վկայելով, Էջմիածնի թիւ 1370  
այս զրջադիրին մէջ գրուած է. «Ի հինգերորդ  
ամի Առաջնորդութեան իւրոյ (Մինասայ)  
Նահանգիս Թոխատու»: Այս վկայութեան  
համաձայն Եւզոկիոյ Առաջնորդական իշխա-  
նութիւնը պէտք է ստացած ըլլայ, իր սիրելի  
Վարդապետէն, Եղիազար Կթղս.էն, ասոր  
ընտրութեան եւ Ս. Էջմիածնի Աթոռին դա-  
հակալութեան տարին<sup>15</sup>: Հետեւաբար 1682  
թուականին նշանակելու է, դէթ պաշտօնա-  
կան անուանումը: Կանխապէս եթէ զրկուած  
ալ էր Եւզոկիա, հակաթու Եղիազարէն, այդ  
անուանումը զուրկ էր օրինաւորութենէ:

Վերոյիշեալ Մկրտում գրիչը օրինակած  
է, ի վայելումն Մինաս Վրդ. ին «Արհիպիս-  
կոպոսի եւ վերատեսչի Եւզոկիա քաղաքի»,  
1687 թուին, երեք պատմական գրութիւններ,  
Միքայէլ Ասորին, Սամուէլ Աճեցի եւ Մովսէս  
Խորենացի: Թէ ահնարկը Մինաս Ամղեցիի  
մասին է, յայտնի է նաեւ հետեւեալ օրակու-  
մէն, սիրելի բարեկամ եւ գործակալ Եղիա-  
զար Կաթողիկոսի<sup>16</sup>: Մկրտում Զուղայեցի  
սարկաւազը Յայսմաւուրք մըն ալ օրինակած  
է 1693ին, Եւզոկիոյ մէջ, որու Յիշատակա-  
րանը ունի «ի յԱռաջնորդութեան նահանգիս  
յԵւզոկիայ Տեառն Մինասայ Աստուածարան  
եւ քաղցրուսոյց Վարդապետի»<sup>17</sup>:

<sup>13</sup> ԵԶԳ, էջ 218:  
<sup>14</sup> ԵՅՁ, հտ. Թ., էջ 370, Ձեռ. թիւ 3144, թղ.  
583ա: — Մաշտոցեան Մատենադարան, Յուցակ  
Ձեռագրաց (յետ այսու ՄՄՅՁ), Ձեռ. թիւ 1370: —  
ՀԱ., 1960, էջ 326:  
<sup>15</sup> ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., անդ, էջ 326:  
<sup>16</sup> ՄՄՅՁ, Ձեռ. թիւ 1483: — ՀԱ., 1960, էջ 325:  
<sup>17</sup> ԵՅՁ, հտ. Թ., 418, Ձեռ. թիւ 3156:

Ըստ այսմ պէտք է ըսենք թէ Մինաս  
Ամղեցիին, հակառակ զանազան պատասխա-  
նատուութիւններու, որոնք իրեն յանձնուած  
էին Եղիազար Կթղս.էն եւ անոր անմիջական  
յաջորդ Նահապետէն, 1693ին կը պահէր տա-  
կաւին Եւզոկիոյ թեմին հովուի տիտղոսը:

1693 Յունիս 4ին, Երուսաղէմի Յովհաննէս  
Արքեպս. ին կողմէ Օրինութեան քուրքին,  
զոր նա իբր Պատրիարք գրած է Միքայէլ Չէ-  
լչպիին եւ այլ երեւելիներու. Մինաս Վրդ.  
ալ ստորագրած է իբր անոր փոխանորդը<sup>18</sup>:

Երեք տարի յետոյ, 1696 թուին գրուած  
Շարակնոց մը, Միքայէլ Բարդամի որդիէն,  
ի վայելումն Իդնատիոս Վրդ. Թոխաթեցիին,  
կը ճանչնայ Մինաս Ամղեցիին միաժամանակ  
Պատրիարք Երուսաղէմի եւ Առաջնորդ Եւ-  
զոկիոյ<sup>19</sup>:

Թէ ինչպէս բացատրելու է այլեւայլ  
Պաշտօններու այսօրինակ բարդումը, ժամա-  
նակակից մը տուած է անոր լուսարանու-  
թիւնը: Չնքուչի պատմիչ Մովսէս կը գրէ թէ  
1679 թուին, երբ վախճանեցաւ Մարկոս  
Վրդ. Չնքուչեցիին, ու «յաջորդեց զԱթոռն  
ձեռնասուն աշակերտ իւր Մինաս Վրդ. ն  
Համղեցի» — որ մանուկ հասակէն որդե-  
գրուած էր Չնքուչի Խաչատուրէն եւ Մար-  
կոս Վրդ. ի ձեռքին տակ կրթուած, — յետոյ  
ժառանգեց իր Վարդապետին դահը: Եւ որով-  
հետեւ, կը շարունակէ նոյնը, Մինաս Վրդ.  
24 տարիներ նուիրակութեամբ շրջապայած,  
եւ յետոյ ալ ժառանգած էր, «զԱթոռ Կոս-  
տանդինու եւ Սուրբ Երուսաղէմի» Պատ-  
րիարքութիւնը, այն ատեն իր եղբորորդին,  
Յովհաննէս Չնքուչեցիին, Երուսաղէմ տարաւ,  
ծայրագոյն Վարդապետ ընելով «առաքէ  
փոխան իւր ի վանքն Շէնքու. Յովհաննէս  
Վրդ. ն եկեալ կառավարէ զԱթոռն, եւ ինքն  
(Մինաս) վախճանի ի Սուրբ Երուսաղէմ, եւ  
թաղի ի Ս. Փրկիչ, ի կարգս Պատրիարքաց,  
որ ունին բազում երախտիք ի վերայ Սուրբ  
Վանքիս»:

Եղբորորդին, Յովհաննէս Վրդ. ն ալ, որ  
վանքին թողած է թագ, եպիսկոպոսական  
սարքեր եւն., մեռած է, կը գրէ նոյն պատ-  
միչը 1723 թուին (ՌՓՄԲ)<sup>20</sup>:

Այս վկայութեան լոյսին տակ ըսելու ենք  
թէ Մինաս Ամղեցիին Չնքուչի իր վանքին

<sup>18</sup> Archivio de Propaganda Fide, Scrittura  
Originali = AP, SO. Armeni, vol. 4, f. 272:  
<sup>19</sup> ԵՅՁ, հտ. Ա., Ձեռ. թիւ 201:  
<sup>20</sup> Թորոս Աղաք, Բ., էջ 458—459:

Առաջնորդական պաշտօնը ատեն մը վարած է փոխանորդի մը օչնութեամբ: Իսկ Եւզոկիոյ Թեմին: Չունինք վկայութիւն: Բացայայտ է որ իր յաճախակի տեղափոխութեան ընթացքին, էջմիածին-Պոլիս-Երուսաղէմ առանցքին վրայ. յաճախ հանդիպելի զանց չէ ըրած նաեւ Եւզոկիոյ, ինչպէս նաեւ Սիրահայեաց իր վանքին, ու անոր զբաղմանը ճոխացնել իւրովսանն նորանոր զբաղմաններով:

Հ. Ակինեան ալ համաձայն է թէ Մինաս Վրդ. Երուսաղէմին հետ պահած է նաեւ Եւզոկիան մինչեւ 1699 թուականը, եւ ուր հուսկ զրկուած է Գալուստ Վրդ. Կայծակ<sup>21</sup>:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ ԻՐ  
ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐՈՎ  
(1680—1704)

1680 թուականէն սկսեալ մինչեւ իր մահը (1704), Մինաս Վրդ. Ամդեցիի կենսագրութիւնը ծանօթ է մեզի իր Օրագրութիւն տետրէն, ուր արձանագրած է իր յաճախակի ուղեւորութիւնները եւ անոնց կապուած դէպքերը:

Այս զբոսածքին բնագիւղը Երուսաղէմ կը պահուի, Ս. Յակոբեանց Մատենադարանը, զբաղման թիւ 1316: Նորայր Եպս. Պողոսեան իր կոթողային Մայր ցուցակ Ձեռագրաց մէջ<sup>22</sup>, կուտայ անոր նկարագրութիւնը եւ ինչ ինչ անցքեր ալ:

Գրուածքը կը սկսի 1680 Հոկտ. 8 թուականէն, կը վերջանայ 1704 Ապրիլ 22ով, օրագրողին մահէն քանի մը ամիս առաջ: Կը լեցնէ 1—290 էջեր: Յետնագոյն զբէ մը, Եսայի արեղայ, աւելցուցած է սուղ Յիշատակարան մը (թղ. 292ա), ուր կը յիշատակուի Եղիազար Կաթողիկոսին մահը 1691 Օգոստոս 18ին, եւ ապա «Մինաս Պատրիարքս Ամդեցի ի թիւ Հայոց ՌՃԾԳ (1704) Նոյեմբեր 24, յաւուր ուրբաթու, ի տասներորդ ժամու»:

Մ. Եպս. Նշանեան, որ կը խոստովանի օգտուած ըլլալ յիշեալ ձեռագիրէն, իրմէն հրատարակուած Օրագրութիւն Երեմիա Ձէլէպի Քեօմիւրնեանի երկասիրութեան համար:

<sup>21</sup> ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., անդ, էջ 329: — Խաչատուր Վրդ. Առաքելեան, 1699 Հոկտ. 20ին Հոռոմ զրկած մէկ նամակին մէջ կը գրէ թէ էջմիածնէն Պոլիս վերադարձին, Գալուստ Վրդ. Կայծակի ձեռքէն պէրաքս սուած էին եւ աքսորած Թոգթ (AP. SO. Armeni, vol. 4, f. 607):

<sup>22</sup> ԵՅԶ, հտ. Գ., էջ 564—565:

մար, համառօտ մը ամփոփած է անոր բովանդակութիւնը, ձԼԵ—ձԽԴ էջերուն մէջ: Ան կը գրէ թէ Ամդեցիին այս զբոսածքին մէջ «պատմական կարեւորութիւն ունեցող բազմաթիւ դէպքեր» օրը օրին արձանագրած է, 23 տարիներու, 7 ամսուան եւ 27 օրուան շրջանին:

Անշուշտ շահեկան պիտի ըլլար բնագրին լրիւ հրատարակութիւնը: Առ ի չգոյ է ատոր, հոս պիտի օգտուինք Նշանեան Եպս. ի սղագրեալ արտատպութեանէն, մի միայն Վարդապետին տեղափոխութիւններուն ժամանակագրութեան համար<sup>23</sup>:

Մինաս Ամդեցի Չնքուշի վանքէն կը մեկնի Երուսաղէմ, Հալէպի գիծով, 8 Հոկտ. 1680ին, ու կը հասնի 10 Փետրուար 1681ին: Ապրիլ 17ին (1681) կ'ընկերանայ Եղիազար Անթապի Ս. էջմիածնի ընտրեալ Կաթողիկոսի շքախումբին: Յունիս 7ին կը ժամանեն Չմիւռնիա, ուսկից կը մեկնին Սեպտ. 22ին, ու Պրուսա կը հասնին Հոկտ. 8ին, ուր կը մնան մինչեւ 1682 Մարտ 1. ասկէ կանցնին Պոլիս, ուր են մինչեւ Յունիս 14: 1682 Յունիս 15ին նաւը կառնեն Տրապիզոնի գիծով ու ցամաքէն, Կարինի վրայով, Ս. էջմիածին կը հասնին նոյն տարւոյն Օգոստոս 12ին: 1682ի Ս. Խաչի տօնին Հոգեւոր Տէրը պատարագեց, կը գրէ Մինաս Վրդ., եւ մենք Սրբութիւն առինք, այսինքն հաղորդութեան:

1682 Նոյեմբ. 7ին Մինաս Ամդեցիին նըւերակ անուանուած է Եւզոկիոյ, ուր կը մտնէ 1683 Փետր. 6ին, եւ հոն կը մնայ մինչեւ 1684 Յունուար 17: Այդ շրջանին կ'այցելէ շրջակայքը ու կը նուերակէ: 1684 Յունուար 30էն մինչեւ 6 Մայիս 1685 կը շրջի Չնքուշի վանքէն դէպի Ամիգ ու դարձեալ Չնքուշ: Նոյն տարւոյն Յունիս 6ին դարձեալ էջմիածին է, այս երկրորդ անգամ, Եղիազարի Կաթողիկոսութեան օրով:

1684 թուին, Օրագրութիւնին մէջ արձանագրած է, Եւզոկիոյ եկեղեցիին մէջ ժողովուրդին ուղղուած աղբը. «առաւօտս ծանուցումն, լաթ չհագնեն եւ պարկեշտ դնան, կին չկա(յ) ժամը, եւ բաղնիք էտէպով դնան, զի թուրքերն այլեւայլ խօսին, մանաւանդ իրենց խօսան հակառակ Եկեղեցւոյն. Աստուած աղատէ զմեզ...»:

<sup>23</sup> ԳԵՆՏԵԱՆ Գ., անդ, էջ 237: Հեղինակը կը խոստանայ Ձեմուշապատումի մէջ այն Օրագրութիւնէն հրատարակել 24 էջեր, որոնք կը հային Չնքուշի:

1685 Նոյեմբ. 3ին, Առաջնորդական պաշտօնով էջմիածինէն ճամբայ կելլէ Եւզոկիա, ուր կը մնայ մինչեւ 1688 Յունուար 21, այցելելով թեմը: 1684ի Յիշատակարան մը Մինաս Վրդ. կը կոչէ արդէն հովուապետ Եւզոկիոյ: 1685 թուականէն առաջ ենթադրելով անոր իրր հովիւ անուանումը:

1688 Յունուար 21ին երրորդ անգամ էջմիածին կ'ուղղուի, ուր կը մնայ Մարտ 10էն մինչեւ 1690 Յունիս 2: Կը դեղերի Արեւելահայքի վանքերը. միանգամայն կը խորհրդակցին Եղիազարին հետ, Երուսաղէմի Աթոռին մասին: Պատրիարքութիւնը իրեն յանձնուած է. Կարինի եւ Եւզոկիայի վրայով 1690 Դեկտ. 22ին Մինաս Վրդ. Պոլիս է:

Օրագրութիւնին մէջ կը գրէ թէ Շահին Ղալիա, — աշխարհական մը, զոր պատրիկ կը կոչէին, Պոլսոյ Աթոռը թափուր ըլլալով, սա կը վարէր 1689էն ի վեր Պատրիարքարանի ստորեայ գործերը, — իրեն այցելէր, Տէր Մարտիրոս ՔՅԵ. ի հետ (հայր Երեմիա Ձէլէպի), եւ երեկոյ միասին ընթրիքի մնացեր է:

1690 Դեկտ. 22էն մինչեւ 1692 Մարտ 3, մէկ տարի եւ երեք ամիսներ բովանդակ, Մինաս Վրդ. Պոլիս է, Երուսաղէմի հոգեւոր եւ իր Պէրաքին համար: Այդ օրերուն այցելած է Պրուսա, Թէքիրտաղ, եւն.:

Այս ժամանակամիջոցին կը հայի, ինչ որ Միքայէլ գրելի, որդի Բարդամի, կ'ակնարկէ Գրեգոր Նարեկացիի Աղօթամատեանին զբոսածութեան առիթով, Եւզոկիա սկսուած 1691 թուին եւ 1692 Յունիսին աւարտած, ազդին խնդրանքով Երուսաղէմի Աթոռին համար անուանուած ըլլալը: Այդ Յիշատակարանը կը գրէ թէ Մինաս Վրդ. զբաղմանը ստացած է ի յիշատակ իր ծնողքին, Մարկոս Վրդ. ին եւն. . . . եւ «երիցս երանեալ» Եղիազար Կաթողիկոսին ատեն, «յորմէ (որ է Կաթողիկոսէն) խնդրեցին ամենայն մեծամեծքն Հայոց» որպէսզի իր սիրելի սպասաւորը եւ պաշտօնեան, Մինաս Վրդ. ը, Երուսաղէմի հայրապետութեան վրայ նշանակէր, «զի հասեալ օրնեացէ յարարարեալ պարտուց զլիազար Սրբոյն Յակոբայ»: Ու կ'աւելցնէ թէ մինչ Մինաս Վրդ. Պոլիս կը գտնուէր «ի գործառնութիւնս Սրբոյ Երուսաղէմի, հանդեալ ի Քրիստոս Եղիազար Կթղս., յամի ՌՃԽ (1691)<sup>24</sup>:

1692 Մարտ 3ին Մինաս Վրդ. Պոլիսէն

<sup>24</sup> ԵՅԶ, հտ. Է., էջ 597, Ձեռ. թիւ 2010. մեծ Յիշատակարան: — ԵՅԳ, էջ ձԲ, ծնթ. 1:

նաւ կը մտնէ եւ Ապրիլ 15ին Երուսաղէմ է: Նոյն տարւոյն Օգոստ. 18ին, Հինգշաբթի օրը, կատարած է Եղիազար Կթղս. ի մահուան տարելիցքը, ինչ որ իր Օրագրութեան մէջ նշանակած է: Երուսաղէմ կը մնայ մինչեւ 1695 Ապրիլ 4:

Հ. Ակինեան, Սաւալանեանցի Պատմութիւն Երուսաղէմի վրայ յեց, 1693 թուին Երուսաղէմ ժանտախտ կար, կը գրէ. իսկ 1694 թուին զահակալական տարածայնութիւններ. բայց Մինաս Վրդ. է միշտ Առաջնորդը: Առ այս, Եւզոկիա 1693—1696 տարիներուն օրինակուած, — ի խնդրոյ Իզնատիոս Վրդ. ի, — Շարականի մը Յիշատակարանը՝ 1696 թուին, Մինաս Վրդ. ը իրր Առաջնորդ Երուսաղէմի կը յայտնէ: Անշուշտ իրր Աթոռակից նկատուած ըլլալու է, որովհետեւ 1693 թուին, Եւքառա (Կեսարիա) աւարտած ուրիշ Շարականի մը Յիշատակարանը, կը ճշդէ Երուսաղէմի Առաջնորդ կամ Պատրիարք Յովհաննէս Վրդ. Պոլսեցիի կողքին՝ կը ճանչնայ «Մինաս Բարունապետ»ը:

Մինաս Ամդեցի իր Օրագրութեան մէջ, 1694 (ՌՃԽԳ) Յունիս 13ին, Ուրբաթ օր, Նօթագրած է. «գիշերս զՏէր Յարութիւնին զրուան եւ զպատն շինեցին, երկրորդ սահաթին պըրծան: Առաւօտս ժամ չընացի: Պատարազ ի Սուրբ Յարութեան դուռն»:

«1694 Սեպտեմբեր 29, շաբաթ, տօն Գէորդ Չորավարին: Երեկոյ Նախատօնակ ի Ս. Գէորդ, վաղուանէ Պատարազ, խաչամպուր» (թղ. 188ա):

Շարականի մը Յիշատակարանը 1696ին Եւզոկիա օրինակուած, ի խնդրոյ Իզնատիոս Վրդ. ձինակեցի, կը հաղորդէ թէ զբաղմանը նուերուած է Ս. Յակոբ վանքին, «ի ժամանակս առաջնորդութեան մեծի քաղաքիս Երուսաղէմայ Մինասայ Ամդեցւոյ աստուածարանութեան վրդ. ին. . .»: Ուրեմն տակաւին 1696 տարւոյն ընթացքին Երուսաղէմ կը գտնուէր Մինաս Վրդ.<sup>25</sup>:

1695 Յունուար 1ի Ամանորի առիթով, Մինաս Վրդ., Սաւալանեանցի պատմածին համաձայն «լեռնակողման լատինաց վանքին 62 կտոր պղինձ եւ մետաքսահիւս քերմանի գործ» նուէր տուած է<sup>26</sup>:

<sup>25</sup> ԵՅԶ, հտ. Ա., էջ 571—572. Ձեռ. թիւ 201, Ձեռ. թիւ 224, էջ 610:

<sup>26</sup> ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., անդ, էջ 328: — ՍԱԿԱԼԱՆԵԱՆ Տ., Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղէմ, 1872, էջ 628:

1695 Ապրիլ 4ին չորրորդ անգամ ճամբայ ելած է Մինաս Վրդ. դէպի Էջմիածին, Հալէպ, Ամիդ, Չնքուշ/Թոխաթ, Կարին քաղաքներու վրայով: 1695 Յուլիս 11ին Հալէպ է, ուր կը կատարէ Յովհաննէս Մկրտիչի տօնը: Ծատ շոգ էր, կը դրէ. հիւր եղած է Պետրոսեանց տունը: 1696 Օգոստ. 10ին Էջմիածին է:

Կ'երթայ Յովհաննավանք, ուր կը գտնուէր 1696 Սեպտ. 8էն ի վեր Նահապետ Կթղս. դահնկէց: Վասնզի նոյն 1696 Նոյեմբ. 1ին Ստեփանոս Վրդ. Զուղայեցի, Պարսից Ծահէն հրամանագիր մը հանել տալով ի նպաստ իրեն, գրաւած էր Էջմիածնի Աթոռը: Մինաս Ամգեցին, Նոյեմբ. 2ին, համախումբ 12 եպիսկոպոսներու հետ նախագահած է օծումի արարողութեան. «Ես եղի ձեռն ի վերայ, կը դրէ, եւ ես օծի զդադարին: Սահակ Վրդ. ն քարոզ, օծման ծանուցումն ես եւ ժողովուրդ քիչ»<sup>27</sup>:

1696 Նոյեմբ. 7ին Ամգեցին Ղօշավանք կ'առանձնանայ, եւ հոն կը մնայ մինչեւ 1697 Յունուար 15: Կ'այցելէ Թալինի, Ս. Սարգիսի, Փարպիի վանքերը:

1697 Փետր. 4ին Երեւան կ'երթայ շնորհաւորելու Նահապետ Կաթողիկոսը, որ վերադարձած էր, իբր օրինաւոր աթոռակալը, Ս. Էջմիածնի Աթոռին վրայ:

Նոյն տարւոյն Փետր. 17ին, Երեւան, այցելութեան մը առիթով, հետեւեալ միջոցէն պը արձանագրած է Օրագրութեան մէջ. «Ստեփանոս Կաթողիկոսն, — հակաթոռը, որ պաշտօնանկ եղած էր Ծահին հրամանով, — եկաւ մօտ Նահապետ Կաթողիկոսին, թէ ինձ օգնեա. զՊուղայու եւ զԳողթնայ Տան նուիրակութիւնն տուր, որ Աղէքսանդր Վրդ. ն գնա նուիրակէ եւ զհազար թումանն Ծահին վճարէ, եւ ես ծառայ ձեզ: Եւ զնայ գարձեալը»<sup>28</sup>:

Ստեփանոս Զուղայեցին, Ծահին հրամանով պաշտօնանկ, 1000 թումանի տուգանքին ենթարկուած էր իբր պատիժ, որովհետեւ զինք խաբար էր՝ ամբաստանելով Նահապետը: Այս գումարը կարենալ զոյացնելու համար է որ Ստեփանոս Վրդ. կը խնդրէ Նահապետ Կթղս. էն, որպէսզի Աղէքսանդր Վրդ. Զուղայեցիին նուիրակութիւն տայ յիշեալ

<sup>27</sup> ԵՁԲ, էջ ձՊԲ: — ԵՅԶ, հտ. Դ., էջ 564—565:  
<sup>28</sup> ԵՅԶ, հտ. Դ., էջ 564—565: — ՉԱՄՁԵԱՆ Հ. Մ., Պատմութիւն Հայոց, հտ. Գ., Վենետիկ, 1786, էջ 725:

երկու դաւաններուն վրայ, որպէսզի հանգանակէր ժողովուրդէն:

1698 Օգոստ. 16ին Մինաս Վրդ. կը մեկնի Պոլիս, ուր կը հասնի Հոկտ. 24ին: Մինչեւ 1701 Սեպտ. 1 Պոլիս կը մնայ: Երկու անգամ Անդրիանապոլիս կ'երթայ իր Երուսաղէմի Պէրաքին հաստատութեան համար, իրեն մրցակից Գալուստ Վրդ. Կայծակին դէմ:

Մինաս Ամգեցիի Օրագրութեան մէջ տեսանք թէ նա 1690ին Եղիազար Կթղս. էն արդէն Երուսաղէմի վրայ նշանակուած էր: Ասիկա կը հաստատէ նաեւ Միքայէլ գրիչ, Նարեկի Ողբերգութեան Յիշատակարանին մէջ, վերը մեզմէ յիշատակուած, թէ ազգին մեծամեծներուն խնդրանքին վրայ Կաթողիկոսը զինքը անուանած էր, իր մահէն քիչ առաջ, 1691 Օգոստ. 8ին<sup>29</sup>:

Տեսանք նաեւ թէ 1692 Ապրիլ 15ին Մինաս Վրդ. Երուսաղէմ մտած էր: Յորքան Յովհաննէս Պոլսեցի Պատրիարքը դեռ կենդանի էր, իբր անոր աթոռակից: 1694ին, դահակալական տարածայնութիւններ ծայր տուած էին, ըստ Սաւալանեանցի: Ծանօթ է թէ ունէր մրցակից մըն ալ յանձին Գալուստ Վրդ. Կայծակին: Ահա այս դէպքերուն է որ կ'ակնարկէ 1698ին իրմէ դրուած Յիշատակարան մը, որ կը կրէ 1698 թուականը: Այս գրչագիրը կը յիշատակէ Հ. Ակինեան: Յիշատակարանէն մեզ կը շահագրգռեն հետեւեալ կէտերը. «...Ես պիտակ Մինաս Վրդ. ս, որ եմ աշակերտ Տեառն լուսաւորեալ հոգի Սրբազան Եղիազար Կաթողիկոսի...», Արեւելքէն Պոլիս եկայ, «ըստ խնդրոյ ամենայն քաղաքացւոց արգիւ եւ մահաարով վասն առաջնորդութեան զործառնութեան ընտրեալ զանարժանութիւնս մեր, որպէս որ յառաջագոյն խնդրեալ էին, եւ մեք եւս վասն այն զործառնութեան կայաք, (յ)ոմանց եկամտից արանց բազում նեղութիւնս կրեցաք յայսմ ամի: Յետ որոյ կրկին հրաւիրեցաք Առաջնորդ ի Ս. Երուսաղէմի. եւ ստացայ զայս Քարոզագիրքս...», զոր գրել տուած է Ստամպոլցի Զուրախ արեղային<sup>30</sup>:

Ա. Տէր Յովհաննէսեանցի համաձայն, Կ. Պոլսեցի Յովհաննէս Պատրիարքի մահէն յետոյ (1697), Պոլսոյ զխաւորները ընտրած են Գալուստ Վրդ. Կայծակ, որ սակայն Երու-

<sup>29</sup> ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., անդ, էջ 326:  
<sup>30</sup> ՄՄՅԶ, Ձեռ. թիւ 579: — ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., անդ, էջ 329:

սաղէմ չէ մտած, այլ Սրբավայրին անուսով հանդանակած դումարը կը վատնէ. ուստի վար առած են ու հրաւիրած Մինաս Վրդ. ր:

1696ին տակաւին ողջ էր Յովհաննէս Կ. Պոլսեցին. ուստի Մինաս Վրդ. Առաջնորդ Աթոռակից է, առանց արքունի Պէրաքի: Ա. Եպս. Տէր Յովհաննէսեանց ալ արքունի Պէրաքին տուչութիւնը ի նպաստ Մինաս Վրդ. ի կը զետեղէ 1699 թուին, մինչ Գալուստ Վրդ. ն ալ կը հետապնդուի իբր վատնիչ Սըրբավայրի համար տրուած նուէրներուն<sup>31</sup>:

Մաղաքիա Դպիր ձէվահիրճեանի Գաւազանագիրքը, գրուած 1713ին, Եպիսկոպոս Երուսաղէմի Հայոց վերնագիրին ներքեւ, 1689 (ՌձԼԸ) թուին նշանակած է Գալուստ Վրդ., որ է Կայծակ յորջորջուածը: Իսկ 1699 (ՌձԽԸ) թուին՝ Մինաս Վրդ. Ամգեցի նշանակած է, ուր կը յարէ նաեւ այս մանրամասնութիւնը. «Սա եկեալ յէջմիածնէ զՏրապիզոնաւ ի Պոլիս, զնայ ընտրութեամբ ազգին յետնէ, եւ անդ խիւսյեցաւ պատրիարքական իշխանութեամբ, ՌձԽԸ (1699) յերկուսն Յունուարի». անշուշտ հասկնալու է պաշտօնապէս իբր Պատրիարք, արքունի հրամանագրով խիւսյուիլը, ինչ որ կը համապատասխանէ Օրագրութեան տուեալներուն<sup>32</sup>:

Այս դէպքին արձագանգը կը հասնի մեզի նաեւ նոյն ինքն Մինաս Վրդ. ի մէկ նամակէն, գրուած 1699 Հոկտ. 20ին, Պոլիսէն, բարեկամի մը որ հոռոմ կը գտնուէր, որու կը հաղորդէ թէ ինքը վերահաստատուած է Երուսաղէմի վրայ, իսկ Գալուստ Վրդ. Կայծակ Եւզոկիա աքսորուած<sup>33</sup>:

Ս. Յակոբի Մատենադարանի թիւ 1234 Ձեռագիրը, Տօնացոյց երից ազգաց, խումբազրուած 1690ին Եր. Կոմիտաս Քհչ. Քէօմիւրճեանէն եւ ընդօրինակուած 1699 թուին Պաշտօնը Սիւրբապետիէն, ի վայելումն Գրիգոր Վրդ. Համգեցիի, կը հաստատէ վե-

<sup>31</sup> ԵՅԶ, հտ. Ա., Ձեռ. թիւ 201: — ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԵՊՍ. Ա., Ժամանակագրական Պատմութիւն Ս. Երուսաղէմի, 1890, էջ 416—417:

<sup>32</sup> ԵՅԶ, հտ. Բ., էջ 443, Ձեռ. թիւ 462: — «Սա եկեալ յէջմիածնէ զՏրապիզոնաւ ի Պոլիս, զնայ ընտրութեամբ ազգին յետնէ, եւ անդ խիւսյեցաւ պատրիարքական ի խնութեամբ, ՌձԽԸ (1699) յերկուսն Յունուարի» (ըստ իր Օրագրութեան): Կը գրէ Մաղաքիա Դպիր ձէվահիրճի, Երուսաղէմի իր Գաւազանագիրքի մէջ: 1699 Յունուար 2էն մինչեւ 1704 Նոյեմբ. 24 Պատրիարք կը ճանչնայ Երուսաղէմի:

<sup>33</sup> AP. SO. Armeni, vol. 4, f. 604:

րոյիշեալը, գրելով «ի հայրապետութեան Սրբոյ Գահոյ Տեառն Մինասայ քաջ հռետորի...», որ նոյն Մինաս Վրդ. Ամգեցին է<sup>34</sup>:

1700 Մարտ 21 թուակիր Գիւր Օրհնութեան մը առաջած է Մինաս Վրդ. Ամգեցին, Երուսաղէմի Պատրիարքի իր հանգամանքով, Պոլսեցի բարերարի մը Քէրէսթէճեան, ի շընորհակալութիւն անոր զրկած շինարարական ապրանքներուն<sup>35</sup>:

1703 թուին, ուրիշ Յիշատակարան մը, ի վայելումն Աստուածատուր Վրդ. ի գրուած, Եւզոկիա, «ի հայրապետութեան Նահապետ Կաթողիկոսի, եւ ի Պատրիարքութեան Սուրբ Երուսաղէմի Տէր Մինասայ Աստուածարան Վրդ. ի. եւ յառաջնորդութեան Եւզոկիոյ Տէր Գալուստ Արքեպս. ի...»<sup>36</sup>: Հ. Ակինեան կը գրէ թէ մինչեւ 1702 Մայիս ամիս Մինաս Վրդ. Ամգեցին կը ստորագրէ «Ես Տէր Մինաս Արհեպիսկոպոս եւ Պատրիարք Երուսաղէմի», երբ տպարան կը յանձնէր Նարեկեան կտորները<sup>37</sup>:

ԳԼՈՒԽ Բ.

ՄԻՆԱՍ ՎՐԴ. ԱՄԴԵՑԻ  
ԳՐԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Մինաս Վրդ. Ամգեցիի գրասիրութեան կը վկայեն գիրքերը ու գրչագրերը, որոնց հետամուտ եղած է: Ընտրութիւնը որ ըրած է մեր նախնեաց զպրութեան գրչագրերը մէջէն իր մտային պաշարը հարստացնելու համար, ցոյց կու տայ անոր ճաշակը եւ ձրգտումները:

Ասոնց Յիշատակարանները կը սկսին, որքան ծանօթ է մեզի, 1655 թուականէն, — երբ ընդունեցաւ Վարդապետական իշխանութիւնը, — ու կ'երկարաձգուի մինչեւ իր մահուան թուականը (1704): Ասոնք, մերթ ընդ մերթ, մեզի կու տան նաեւ թանկագին տեղեկութիւններ իր կեանքի այլեւայլ փուլերուն:

Այս գրչագրերը, իրմէ ապսպրուած կամ ստացուած, ժամանակագրական կարգով կը դասաւորենք, իբրեւ ազգիւր անոր կենսագրութեան մասին տեղեկութիւնները ընդլայնելու:

<sup>34</sup> ԵՅԶ, հտ. Դ., էջ 382, Ձեռ. թիւ 1234:  
<sup>35</sup> Ձեռ. Ս. Ղազարի, թիւ 1887, Ձ, գ:  
<sup>36</sup> ՍԻՐՄԷՆԵԱՆ ԵՊՍ. Ա., Մայր ցուցակ Ձեռագրաց Երուսաղէմի, Վենետիկ, էջ 72բ:  
<sup>37</sup> ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., անդ, էջ 330:

Մինաս Վրդ. իբր զբազան արտադրու-  
թիւն չունի կարեւոր գրուածքներ: Իբ անու-  
նով կը յիշատակուի Ազգաբանութիւն Թա-  
գաւորաց Հայոց, յօրինուած իբմէ, Հ. Ակին-  
եանի համաձայն, հետեւողութեամբ Յրա  
Մարտինոսի Հռոմայեցոց եւ Պապերու պատ-  
մութեան: Նոյն բանասէր Հայրը լոյս հանեց  
նաեւ քանի մը անտիպ Տաղեր (ՀԱ., 1960,  
էջ 333—359), որոնք կը բացայայտեն Հայ հո-  
գեւորականի բարի հողին: Ունի նաեւ քանի  
մը անտիպ նամակներ, զոր մենք հոս կ'ար-  
տատակենք:

Հուսկ ունի իր անձնական Օրագրու-  
թիւնը, 290 էջոց, որ կը գրկէ 1680—1704  
տարիները, ուսկից միայն հատակոտոր պա-  
տահիկներ լոյս հանուած են, եւ որուն բնա-  
գիրը կը պահուի Երուսաղէմ Ս. Յակոբեանց  
Մատենադարանը, Ձեռ. թիւ 1316:

**ՄԻՆԱՍ ՎՐԴ. ԱՄԴԵՅԻԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ**

1. Ժողովածոյ, 1655 թուին, ստացողին  
կնիքով, որ է «Ք(րիստո)սի Ծ(ա)ռ(այ) Մի-  
նաս Վրդ. Թ.վ. ՌՃԴ»։ Թէեւ Ամդեցի մա-  
կանունը չկայ, բայց իր Վարդապետական  
կնիքը ու 1655 տարին բաւական է եղրա-  
կացնելու համար թէ ինքն է<sup>38</sup>:

Ժողովածուն կը բովանդակէ Աստուածա-  
չունչի վերաբերող Բառգիրք, երբայական  
ինչ ինչ եղանակով իմաստը բացատրող: —  
Կաթաղիկէ Թուղթերը: — Իմաստութիւն  
Յետուայ Որդոյ Նաւայ: — Քարոզգիրք: —  
Վարք Հարանց: — Գրիչներն են Ոսկան դպիր  
եւ Նիկողայոս Արեղայ:

Նիւթեր՝ որոնք կը մատնանշեն նորընծայ  
վարդապետի մը հիմնական մտահոգութիւն-  
ները:

2. Խորով Անձեւացիի Մեկնութիւն Ժա-  
մակարգութեան, 1660 թուին: Ձեռագիրին  
սկիզբը գրուած կը գտնենք Ստացողին  
կնիքը 1655 տարիով: Յիշատակարանը ունի  
հետեւեալը. «Կազմեցաւ վերստին... ձեռամբ  
Մինաս բանի սպասաւորի, ի յԱռաջնորդու-  
թեան Շէնքուշու նահկի Մարկոս Աստուածա-  
բան Վրդ. ի», ի թուին 1109 (1660)<sup>39</sup>:

3. Աստուածաշունչ գիրք. Յիշատակա-  
րանը 1664 թուին, գրուած նոյն ինքն Մինաս  
Վրդ. էն, որ նախ կը խնդրէ յիշել Մարտիրոս  
Վրդ. Չնքուչեցին, որուն կը պատկանէր այս

<sup>38</sup> ԵՅՁ, հտ. Դ., էջ 272, Ձեռ. թիւ 1173:  
<sup>39</sup> ԵՅՁ, հտ. Դ., էջ 421, Ձեռ. թիւ 1253:

Ս. Գիրքը սկսեալ 1621 տարիէն: Կը խնդրէ  
յիշել նաեւ անոր աշակերտը Մարկոս Վրդ.  
Չնքուչեցին, յետոյ նաեւ ինքզինքը. ու կը  
չարունակէ թէ Եւդոկիա երթին աւազակներէ  
կողոպտուելով, զրկուած է նաեւ ունեցած  
զիրքերէն, ու մնացած էր միայն այս համա-  
ռօտ Աստուածաշունչը, որ Մարկոս Վրդ. էն  
նուէր ստացած էր: Պատշաճ համարեցայ, կը  
գրէ, զայս եւս զետեղել Սիրահայեաց Ս. Աս-  
տուածածին վանքին զբաղարանը, ինչ որ  
ըրած էր Մարտիրոս Վրդ., որպէսզի ես ալ  
Քրիստոսէ թողութիւն գտնեմ: Ապա կը յա-  
ւելու թէ 1664 (ՌՃԺԳ) ամին, Եղիազար  
Վրդ. ն Կաթողիկոս ձեռնադրուեցաւ Հալէպի  
մէջ, Խաչատուր Սիսի Կթղս. էն, Քառասուն  
Մանկանց եկեղեցիին մէջ<sup>40</sup>:

4. Դիոնեսիոսի Յաղագս երկնային Քա-  
հանայապետութեանց: Ունի երկու սուղ Յի-  
շատակարաններ, 1673 եւ 1686 թուին, զըր-  
ւած Ստացողէն, որ նոյն ինքն է Մինաս Վրդ.  
Ամդեցի. «Ի քաղաքն Երուսաղէմ, ի դուռն  
Ս. Յակոբայ վիճակս ամենայն Հայոցս ազ-  
գի»<sup>41</sup>:

5. Իգնատիոս Վրդ. ի Մեկնութիւն Ղու-  
կասու. 1674 թուին: Ձեռագիրին թուականն  
է 1326, որ 1674ին ստացած է Մինաս Վրդ.  
եւ նորոգած է: Այս զբաղակը իբր նուէր  
ստացեր է իր Վարդապետէն, Մարկոս Չըն-  
քուչեցիէն, եւ կը պատմէ անոր պարագանե-  
րը այսպէս. Երբ զնացի իմ նախկին դասա-  
տունս Շէնքուշ, շատ կը ցանկայի ունենալ  
Ղուկասի Մեկնութիւնը, զոր տեսած էի կան-  
խորօք իմ Վարդապետիս մօտ. խնդրեցի իր-  
մէ այդ գանձը. եւ նա, որ իբր հոգեւոր Հայր  
իր սրտի վարչամակին մէջ ծրարեալ կը պա-  
հէր զիս, տուաւ ինձի իբր օժիտ «Ի յիշատակ  
հոգւոյ իւրոյ, այսու պայմանաւ զի առցուք  
ի ձեռս եւ քարոզեսցուք զբանս կենսունակ ի  
լսելիս քրիստոսասիրաց անձանց»: Ու ապա  
չարունակելով կը գրէ թէ Եղեսիա գալուն,  
նշմարած է զբաղակը մէջ «զկրկին անկածս  
թղթոյն ոչ բարեւք գրեալ ըստ առաջնոյ  
ծրին», ու քակելով կրկին գրել տուած է  
Եղեսացի Ովանէս Քահանայի:

Հուսկ կը խնդրէ յիշել զինքը, իր Վար-  
դապետը Մարկոս Չնքուչեցին, իր մարմնա-  
ւոր ծնողքը, Հայրը մահտեսի Առաքեալը, «որ  
միով ամաւ յառաջ փոխեցաւ ի Քրիստոս»:

Գրչագիրին նորոգութիւնը եղած է 1674ին,

<sup>40</sup> Թորոս Ազար, Բ., էջ 464—465:  
<sup>41</sup> ԵՅՁ, հտ. Դ., էջ 183, Ձեռ. թիւ 1120:

«Ի Հայրապետութեան Սուրբ Երուսաղէմի  
Տէր Եղիազար Կթղս. ի եւ ի Կաթողիկոսու-  
թեան Սուրբ Էջմիածնի Տէր Յակոբ Հայրա-  
պետի»։ Սուլթան Մէհմէտի 27րդ տարին  
(1648—1678, Մէհմէտ Դ.), որ Կամենիցի  
կողմը պատերազմի մէջ էր<sup>42</sup>:

6. Սաղմոս Տաղաչափեալ Յակոբ Քհչյ.  
Թոխաթեցիի, 1675 թուին: Մինաս Վրդ.,  
Եղիազար հակաթոռ Կթղս. ի հրամանով  
Երուսաղէմէն Պոլիս եկած էր ուխտազնա-  
ցութիւն մը դէպի Ս. Երկիրը կազմակերպե-  
լու նպատակով: Այդ առիթով ծանօթացեր  
է վերոյիշեալ Սաղմոսարանին, սիրած է  
գրուածքը, եւ օրինակել տուած է Տէր  
Ովանէս Քիյ. Երկանի, ի դուռն Գուլ Գարուի  
Ս. Աստուածածնին<sup>43</sup>:

Ձեռագիրին Յիշատակարանը կըսէ. «Յի-  
չեցէք զՄարկոս Վրդ. ն, որ է ուսուցիչ եւ  
ձեռնադրող եւ խրատող ստացողի զրոցս Մի-  
նաս Վրդ. ի»:

Մինաս Ամդեցին սոյն Սաղմոսարանը եւ  
Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի Պոլսոյ հըր-  
կիղութեան զիրքը, 1702 թուին, նուէր ձգած  
եմ, կը գրէ, «Իմում հարազատի նորընծայ  
Քահանայի Պետրոսի», որ Երուսաղէմ կը  
գտնուի իր մանկահասակ Աստուածատուր  
որդիին հետ:

7. Վարք Հարանց, Մինաս Վրդ. ի հրա-  
մանով օրինակուած Թումա գրիչէն, 1676  
թուին: Յիշատակարանը իբմէ է, ուր կը գրէ.  
«Ի յարգեանց Ս. Երուսաղէմի, բայց առանց  
գնոց դրամի». ցորքան կ'ապրիմ ես, կը գրէ,  
զիրքը իմ ընթերցմանս համար է, իսկ մահէս  
վերջ՝ յիշատակ Երուսաղէմի Ս. Յակոբայ  
վանքին<sup>44</sup>:

Եղիազար հակաթոռ Կթղս. ի անձին  
կապուած, 1676-ին՝ Մինաս Վրդ. բնակու-  
թեամբ ալ Երուսաղէմ հաստատուած էր:

8. Ժողովածու Ներսէս Լամբրոնացիի  
Մեկնութիւն ԺԲ. Մարգարէից, 1678ին օրի-  
նակուած Միքայէլ գրիչէն, որ հեղինակն է  
նաեւ Յիշատակարանին, ուր կը գովէ Մինաս  
Վրդ. ի, իբր «վարժեալ աստուածային օրինօք  
եւ կատարեալ տեսական եւ արդիւնական  
վարդապետութեամբ... եւ զբասիրութեամբ  
ճոխացեալ աշխարհայնովս ամենայն եւ զեր-  
աշխարհայնովս», Էջմիածնի Եղիազար Կա-  
թողիկոսի ժամանակ:

<sup>42</sup> ԵՅՁ, հտ. Բ., էջ 421, Ձեռ. թիւ 453:  
<sup>43</sup> ԵՅՁ, հտ. Գ., էջ 400, Ձեռ. թիւ 892:  
<sup>44</sup> ԵՅՁ, հտ. Գ., էջ 211, Ձեռ. թիւ 756:

Դիտելի է որ եթէ Եղիազար Էջմիածնի  
Կաթողիկոսութեան օրով գրչուած է, 1678  
թուականը չի համապատասխաներ. գուցէ  
1687 էր. ստուգիւ ալ Մաշտոցեան Մատենա-  
դարանի Յուլիան, թիւ 1149 Ձեռ. ը գրչու-  
թիւնը 1684—87 տարիներուն նշանակուած  
է<sup>45</sup>:

9. Գրիգոր Տաթեւացիի Առակաց մեկ-  
նութիւն, 1678 թուին օրինակուած Միքայէլ  
որդի Բարդամու, որ Մինաս Վրդ. ը կ'որակէ  
Եղիազար Կթղս. ին «սիրելի եւ սպասաւոր եւ  
պաշտօնեայ ծառայեալ մինչեւ ցարդ ամս  
ԻԲ., գոլով եւ գործակալ ամենայնի, Ս. Էջ-  
միածնայ եւ Ս. Երուսաղէմայ, եւ ամենայն  
իրադրութեանց Ամենայն Հայոց՝ Մինաս  
Վրդ. ստացող սորին»<sup>46</sup>: Հոս եւս ձեռագիրին  
թուականը ուղղելի է 1687ի:

10. Բարսեղ Կեսարու Հայրապետի Մա-  
տենագրութիւն. 1683 թուին. Գրոզն է Մի-  
քայէլ որդի Բարդամու. Յիշատակարան գրչի  
կը խնդրէ յիշել ստացողին Հայրը, մայրը...  
Մարկոս Վրդ. ը: Գրուած է, կ'ըսէ, ՌՃԼԲ  
(1683) Դեկտ. 10ին, «Ի Հայրապետութեան  
հանուրց Հայոց Աթոռոցն Սրբոց Երուսաղէմի  
եւ Էջմիածնի, զի այս ամ եւ կէս եղեւ զՀայ-  
րապետութեան Գահն Էջմիածնի ունի Տէր  
Եղիազար Կթղս. ն Սուրբ Երուսաղէմի»: Այս  
տարի, կը յաւելու, Եղիպոս վախճանեցաւ  
Մարտիրոս Վրդ. Ղրիմեցի. պատերազմ եղաւ  
հազարացիներու եւ Ֆրանցի ազգին միջեւ,  
ու երկու կողմէն շատ արիւն թափեցաւ:

Գրչագիրը կը բովանդակէ Ս. Բարսեղի  
Հարցոյց գիրքը, Մատթէոս Վրդ. ի աշա-  
կերտ Գրիգոր Տաթեւացիի, Քաղուածքը,  
Ս. Բարսեղի Յաղագս Պահոցը եւ Մեկնու-  
թիւն վեցօրեայ Արարչութեան<sup>47</sup>:

11. Ժողովածոյ մը խմբագրուած 1356ին,  
որ է Ժամագիրք եւ Խորհրդատետր: Վերջին  
ստացողը Մինաս Ամդեցին է, որուն անձնա-  
կան կնիքն ալ կայ: 1683 թուականին կը նը-  
ւիրէ Ս. Յակոբայ վանքին<sup>48</sup>:

12. Գրիգոր Տաթեւացիի Մեկնութիւն  
Յովնանու, 1686 թուին: Ստացողն է Մինաս  
Վրդ. Ամդեցի, որ յիշատակ թողած է զայս  
Ս. Յակոբի վանքին, որպէսզի անկէ օգտը-

<sup>45</sup> ՄՄՅՁ, հտ. Ա., Ձեռ. թիւ 1149, գրչութիւն  
1684—87ի: — ՀԱ., 1960, էջ 324:  
<sup>46</sup> ՀԱ., 1960, էջ 324: — ՄՄՅՁ, հտ. Ա., Ձեռ.  
թիւ 1149:  
<sup>47</sup> ԵՅՁ, հտ. Բ., էջ 458, Ձեռ. թիւ 470:  
<sup>48</sup> ԵՅՁ, հտ. Դ., էջ 385, Ձեռ. թիւ 1236:

ւողները աղօթեն բաղամեղիս համար, կը գրէ Յիշատակարանը. «Գրեցաւ ՌՃԼԵ (1686) թվականին, խմով ձեռամբ»:

Գրչազիրի պահպանակին վրայ կայ իր զիրքերուն ցանկը, այսպէս. «Համար գրոցս այս է. Աղօթից մեկնիչ, Խորհրդի մեկնիչ, Նարեկ, Արարածոց մեկնիչ, Նարեկի լուծմունք, Դիոնեսիոս, մէկ Քարոզգիրք, Նահապետաց կտակն, Պատմայ գիրք (չկայ անունը), Առակ մի, Ռբայ լուծմունք»<sup>49</sup>:

13. Ժողովածոյ. Վարդան Վրդ.ի Մեկնութիւն Դանիէլի, եւ Անդրէաս Եպս.ի Մեկնութիւն Յայտնութեան: Աստուածատուր Վրդ. Բանասէր 1682 թուին այս գրչազիրը նուիրած է Մինաս Վրդ. Ամդեցիին, զոր ինքն ալ 1686ին յիշատակ թողած է Ս. Յակոբի վանքին, ինչ որ բացայայտ է իր ձեռքով գրուած Յիշատակարանէն<sup>50</sup>:

14. Ժողովածու Նամականի. ուր կայ Ս. Ն. Ծնորհալիին թուղթ Ընդհանրականը, Կիւ Մանուէլի հետ թղթակցութիւնները. Սահմանք Զորարդ ժողովոյն այսինքն Քաղկեդոնի, թարգմանուած Կղեմէս Վրդ.է, եւն.: Այս ձոխ հաւաքածոն ալ թողած է Ս. Յակոբի վանքին:

Գրչին Յիշատակարանը 1686 թուին է. ստացողը ինքն իսկ Մինաս Վրդ. Ամդեցիին գրած է, Եւզոկիայի մէջ, եւ կ'ըսէ թէ յիշատակ կը թողու իր հոգեւոր եւ մարմնաւոր ծնողաց<sup>51</sup>:

15. Սարգիս Ծնորհալիի Մեկնութիւն Կաթողիկէ քղբոց. 1687ին Մինաս Ամդեցի օրինակել տուած է Մկրտում Զուղայեցիին<sup>52</sup>:

16. Միքայէլ Ասորի, Սամուէլ Անեցի, Մ. Խորենացի Պատմութիւն. այս բոլորը Մինաս Վրդ. օրինակել տուած է Մկրտումին, 1687 թուին, Յիշատակարանին մէջ գրչիւր Մինաս Վրդ.ը կանուանէ սիրելի բարեկամ ու գործակալ Եղիազար Կթղս.ի<sup>53</sup>:

17. Միքիթար Գօշի Կանոնագիրքը եւ Դատաստանագիրք. 1687 թուին Միքայէլ որդի Բարդամի ձեռնարկած է գրչել «ի խնդրոյ Մինաս Վրդ.ի Ամդեցեոյ աստուածաբերոյ անձին եւ յԱստուած խրատուելոյ. որ ոչ եր-

բեք յայլ ինչ իրս է պարապեալ քան քէ յԱստուած գորացեալ եւ նովաւ հանդիսացեալ միշտ ի գերակատարն գլուխ ունելով գակն ոգւոյ ըստ իմաստնոյն խրատս, լուսատու հոգեոյ եւ անսայթաք պողոտայ ոտից զպատուիրանս Տեառն ունել առ ինքն եւ ըստ ինքեան վարժեալ օրինօք, եւ տարեալ տեսական եւ արդիւնական դերապայծառ եւ տիեզերափայլ վարդապետութեամբ, եւ առաւելեալ ամենայն մաքրութեամբ եւ գրասիրութեամբ ձոխացեալ: Եւ ընդ հոլովից զրոց ստացելոց, ստացաւ եւ զգիրս Կանոնաց եւ Դատաստանաց, եղեալ ի միում տիր» իր գործածութեան համար. «եւ յիշատակ հոգեւոր իւրոց. եւ հոգեւոր ուսուցչին իւրոց Մարկոս Վրդ.ի Չնքուչեոյ փոխելոյ առ Աստուած», նաեւ ծնողաց եւ բոլոր արեւակաց:

Գրչութիւնը եղած է Եղիազար երկուց երանեալ Կթղս.ին օրով, որուն Մինաս Վրդ. զիտապետ եւ Արքեպս. Եւզոկիակերտին ԻՖ. տարիներէ ի վեր է սիրելի սպասաւոր եւ պաշտօնեայ, թէ ի Ս. Էջմիածին թէ Երուսաղէմ<sup>54</sup>:

18. Խորհրդատետր; 1688 թուին. Մինաս Վրդ., ձեռագրին Յիշատակարանին համաձայն, յիշատակ թողած է Ս. Յակոբի վանքին<sup>55</sup>:

19. Մաշտոց, 1690 եւ 1704 թուին, Մինաս Վրդ.ի անձնական գործածութեան համար, զոր 1690ին յիշատակ թողած է Ս. Յակոբի վանքին: Յեռնազոյն գրչի մը նշանակած է յաջորդաբար Վրդ.ին մահը, 1704 Նոյեմբ. 24<sup>56</sup>:

20. Ս. Ներսէս Լամբրոնացիի Մեկնութիւն Պատարագի, 1691 Նոյեմբ. 8ին: Գրքուած Կովտասէ, որ ինքզինքը կը կոչէ Սպասաւոր Տեառն Մինասայ Աստուածաբանութեան Վարդապետի: Յիշատակարանը, 1691 թուին, կը հաղորդէ թէ Ամդեցիին նուիրակ զրկուած էր Պոլիս, «ի յԱսիա եւ ամենայն տանս Յունաց, եւ Առաջնորդ Երուսաղէմի Աթոռին, հրամանաւ Եղիազար Կթղս.ի», եւ հաւանութեամբ թէ Արեւելեան եւ թէ Արեւմտեան Հայքի Եպիսկոպոսներուն, Վարդապետներուն, իշխաններուն, տօլթաբաւորներուն: Դիտելի է որ «յԱսիա եւ ամենայն Տանս Յունաց» աստութիւնը Արեւմտահայք կը նշանակէ, Օսմանեան պետութեան հոգեբեր: Գիր-

<sup>49</sup> ԵՅՁ, հտ. Գ. էջ 292, Ձեռ. թիւ 1188:  
<sup>50</sup> ԵՅՁ, հտ. Ե. էջ 540, Ձեռ. թիւ 1681:  
<sup>51</sup> ԵՅՁ, հտ. Գ. էջ 355, Ձեռ. թիւ 858:  
<sup>52</sup> ՄՄՅՁ, հտ. Ա., Ձեռ. թիւ 1370: — ՀԱ, 1960, էջ 326:  
<sup>53</sup> ՄՄՅՁ, հտ. Ա., Ձեռ. թիւ 1483: — ՀԱ, 1960, էջ 325:

<sup>54</sup> Թորոս Աղբար, Բ. էջ 468—469:  
<sup>55</sup> ԵՅՁ, հտ. Է. էջ 362, Ձեռ. թիւ 2268:  
<sup>56</sup> ԵՅՁ, հտ. Է. էջ 391, Ձեռ. թիւ 2291:

տենք որ Եղիազար Կթղս.ը վախճանեցաւ 1691ին, Օգոստոս ամիսը<sup>57</sup>:

21. Գրիգոր Նարեկացիի Աղօթամատեան եւ Երկեր, 1692 թուին: Գրչութիւնը սկսած է Միքայէլ Բարդամեան, 1691ին, Եւզոկիա, եւ 1692 Յունիսին աւարտած, ի վայելումն աստուածաբեալ «աստուածաբան Վարդապետի եւ ճշմարիտ քարոզողի, որ ըստ գրասէր բարուցն իւրոց» փափաքած է ունենալ այս գիրքը: Ստացաւ, կը գրէ, ի յիշատակ իր ծնողաց, իր Վարդապետին Մարկոսի եւն., Ս. Էջմիածնի երիցս երանեալ Եղիազար Կթղս.ի օրով, — անշուշտ գրչութեան ձեռնարկած ատեն, — որմէ խնդրեցին Հայոց մեծամեծները, որպէսզի իր սիրելի պաշտօնեան, Մինաս Վրդ.ը, կարգէ Երուսաղէմի Հայրապետութեան, «զի հասեալ օգնեցէ յարարարեալ պարտուց զլսադրի Ս. Յակոբայ»: Մինչդեռ Մինաս Վրդ. Պոլիս կը գտնուէր, Կաթողիկոսը հանգեաւ յամի ՌՃՈ (1691):

Գրչութիւնը եղած է «յառաջնորդութեան նահանգիս Նէյո-Կեսարիոյ սոյն Տեառնս Մինասայ Արքեպս.ի Եւզոկիակերտիս» Ս. Սարգիս եւ Ս. Ստեփաննոս եկեղեցիներուն հովանիին ներքեւ: 1692 Յունիսի վերջերը, մինչդեռ Մինաս Վրդ. Երուսաղէմ կը գտնուէր:

Ըստ այսմ, Ամդեցիին կը պահէր տակաւին Եւզոկիոյ Առաջնորդութիւնը, Երուսաղէմի վրայ անուանումէն յետոյ ալ, ինչ որ Գ. Գէորգեան կը պաշտպանէ Ա. Ալպոյաճեանի դէմ<sup>58</sup>:

22. Յայսմաւուրք, 1693 թուին, գրչուած Մկրտում Զուղայեցիէն, Եւզոկիա: Յիշատակարանը, միեւնոյն տարւոյն, կը գրէ. «ի յառաջնորդութեան նահանգիս յԵւզոկիոյ Տեառն Մինասայ աստուածաբան եւ քաղցրուսոյց Վարդապետի»<sup>59</sup>:

23. Ս. Ներսէս Լամբրոնացիի Մեկնութիւն Պատարագի, 1697 թուին: Ձեռագիրին առաջին ստացողը եղած է Մարտիրոս Վրդ. Չնքուչեցիին 1613 թուին, նա թողած է Չնքուչի Սիրահայեաց վանքին: Գրչազիրը յաջորդ ժամանակներուն, վանքի գրադարանէն տարուած է Էջմիածին, «զոր զողացեալ էին» կը գրէ նոյն ինքն Մինաս Վրդ., Յիշատակարանին հեղինակը. «ի վանացն Չնքուչայ, ի

<sup>57</sup> ԵՅՁ, հտ. Գ. էջ 72, Ձեռ. թիւ 650:  
<sup>58</sup> ԵՅՁ, հտ. Է. էջ 21, Ձեռ. թիւ 2010, թղ. 597, մեծ Յիշատակարան:  
<sup>59</sup> ԵՅՁ, հտ. Թ. էջ 412, Ձեռ. թիւ 3156:

Նախակրթեալ աթոռոյն խմոյ». եւ որովհետեւ ինծի ծանր թուեցաւ այս, կը գրէ, «հեռանալն գրոցս մեր ի վանուց Ս. Աստուածածնի որ ի Չնքուչ» փոխանակեցի զայն Կոչումն Ընծայութեան եւ ձառից գիրքերով, ու վանքին վերադարձուցի ի յիշատակ:

Չանցառուներուն դէմ ալ իր դատակնիքը կը սպառնայ. նզովք՝ 318 Հայրապետներէն Նիկիոյ Ժողովին. «նաեւ յինէն, Մինաս Վրդ.էն, եղիցի կապեալ հոգեւոր եւ մարմնով, աստ եւ ի հանդերձելումն... ամէն»: Գրեցաւ ՌՃ(Խ)Ձ (1697) Յունիս 10 «իմով ձեռամբ Մինաս Վրդ.իս, ի դուռն Ս. Էջմիածնի, ի կաթողիկոսութեան Տեառն Նահապետի»<sup>60</sup>:

Եթէ Նահապետին օրով է, ինչպէս որ գրուած է, վրիպակաւ է Թորոս Աղբարին արտագրած թուականը ՌՃԽՁ: Մենք Ի գիրք Խ գիրով կը փոխանակենք:

24. Երագահան, 1693 եւ 1703 թուին: Մինաս Վրդ. այս թուականներուն, իրր Պատրիարք Երուսաղէմի, իր մէկ քանի երազները արձանագրեր է<sup>61</sup>:

25. Աւետարան Գաղիկ Շահնշահի, օրինակուած 1029—1064 տարիներուն մէջ: Մինաս Ամդեցիին պարզապէս նորոգել տուած է կորուստէ վրկելու համար թանկարժէք գլորչազիրը, 1703 թուին, Երուսաղէմ, մահէն ճիշտ տարի մը առաջ<sup>62</sup>:

26. Ճառքնտիր. Սերաստիոյ Ս. Նշան վանքին թիւ 150 գրչազիրն է, որուն առաջին մասը (էջ 3—190) Պատմութիւն Սրբոյն Յուհաննու Ոսկեբերանի, Կ. Պոլսոյ Եպիսկոպոսապետի եւ տիեզերաց լուսաւորչի ծննդեան եւ սննտեան եւ գեղեցիկ քաղաքաւարութեան: Ս. Հայրապետին վարքն է, յոյն բնազիրէն թարգմանուած 1100 թուին, Գրիգոր Մեծ Վկայասէրէն: Կը յաջորդեն ուրիշ ձառեր, մինչեւ էջ 283:

Յուցակը կազմողը, Թորգոմ Արքեպ. Գուշակեան, կը գրէ թէ հաւանօրէն այս ձեռագիրին գրչիւր Մինաս Վրդ.ն Ամդեցիին է, հետեւեցնելով գրչազիրին երեսին վրայ գրուած երկտող յիշատակագրութեանէն<sup>63</sup>:

Երկին թարգմանութեան թուականը կը

<sup>60</sup> Թորոս Աղբար, Բ. էջ 485—486:  
<sup>61</sup> ԵՅՁ, հտ. Ը., էջ 199:  
<sup>62</sup> ԵՅՁ, հտ. Ը. էջ 248, Ձեռ. թիւ 2557:  
<sup>63</sup> ԳՈՒՇԱԿԵԱՆ ԱՐԿԵՊ. Թ., Յուցակ Հայերէն Ձեռագրաց Սերաստիոյ Ս. Նշան վանքին, Վիեննա 1961, ձառքնտիր, Ձեռ. թիւ 150, էջ 90:

մնայ մեծ Յիշատակարանին մէջ, մինչդեռ գրչութեան թուականը նշանակուած չէ:

\* \* \*

Դարու մը մէջ ուր տակաւին տպագիր հրատարակութիւնը հայ իրականութեան մէջ իր երկչոտ քայլերը հազիւ սկսած էր, մանաւանդ նախնեաց մատենագրութեան հայող մարզին մէջ, անհրաժեշտ էր տակաւին ընտիր գրչագիրներու մատենադարան մը կազմելը, մօտենալու համար Հայաստանեայց Եկեղեցւոյ հարազատ վարդապետութեան: Այս է որ ջանացած է կատարել Մինաս Ամզեցին:

Բացի Ս. Գիրքէն, Աստուածաշունչ, Սաղմոս, Խորհրդատետր, Մաշտոց, որոնք կը կազմեն որեւէ հոգեւորականի առձեռն գէնքերը, Ամզեցին հետապնդած է ձեռք ձգել ժողովածոներ, որոնք ինքնին փոքրիկ գրադարաններ էին ծանօթացնող նախնեաց պատմութեան, դաւանանքին. օրինակ՝ Նամակաճիւն Ս. Ներսէս Ծնորհալիի եւ այլ Հայրապետներուն: Ս. Հայրերուն Մեկնողական գործերը, եւ սրբազուն Վարդապետներուն, ինչպէս եղած են Բարսեղ Կեսարացի, Խոսրով Անձեւացի, Գրիգոր Նարեկացին, Ներսէս Լամբրոնացին, Իգնատիոս Վրդ., Սարգիս Ծնորհալի եւն...: Ատոնց հետ զանց չէ ըրած իր հոգեւոր կեանքի սնունդին համար օգտակար հոգեշունչ վարքերը Հարանց Անապատի, Յայսմաուրբէ եւն.:

Այսպիսի վճիտ ակնադիւրէն է որ զիտութեան իր պապակը յագեցուցած է Ամզեցին: Աստուածաբան Վարդապետի կամ աստուածաբան անձի եւ այլ գովեստները, որ իրեն կու տան իր աշակերտները կամ գրիչները, գրչագիրներու Յիշատակարաններուն մէջ իբր լուսապայծառ ջահ ի մէջ ազգին, սնտի տիրողոսներ եղած չեն:

Ամզեցին, գրական տեսակէտէն կշիռ ունեցող գրուածք թողած չէ: Հոգեւորականի սեփական առաքելութեան նուիրուած անձ եղած է, Եղիազար եւ Նահապետ կաթողիկոսներուն ծառայութեան մէջ, գործի մարդ, քարոզիչ, հովիւ. բայց իմաստութիւնը ունեցած է հետամուտ ըլլալու ինչ որ հարազատ էր, մնայուն էր, անխարդախ էր նախնեաց ժառանգութիւն ձգած աւանդութեան մէջ իբր վարդապետութիւն:

Ինչպէս Հայոց բնաշխարհը, իր լեռնաշղթաներուն ընդերքը կենսատու եւ քաղցրահամ ջուրի առատ աղբիւրներ կը պահէ,

այսպէս Հայաստանեայց Եկեղեցին ալ՝ Ս. Հայրերէն աւանդ թողուած կրօնաշունչ մատենագրութեան ընդերքը ուղղափառութեան դանձեր: Բաւ է պեղել Աւանդութեան խորքը յատկապէս աչքերով: Այդ է որ կատարած է Մինաս Ամզեցին: Իր մէկ նամակը որ Պոլիսէն ուղղուած է, 1699 Դեկտ. 11 թուակիր, Հռոմի Եպիսկոպոս Իննովկենտիոս ԺԲ. Պապին, ուր կը բացայայտէ իր ուղղափառ հաւատքը, զոր քաղած էմ, կը գրէ, իմ նախնի Հայրերուն թողած աւանդէն, բաւական պերճախօս է բացայայտելու եւ արդարացնելու իր աստուածաբանութեան մասին տրուած դովբերը:

ԳԼՈՒԽ Գ.

ՄԻՆԱՍ ՎՐԴ. ԱՄԴԵՑԻ ԵՒ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԵՒ ՀՌՈՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ

ԺԵ. դարուն Մովսէս Գ. Տաթեւացին, նախ իբր Եպիսկոպոս՝ երկու հայ եպիսկոպոսակիցներու հետ, 1626 Օգոստոս 17ին, ապա նաեւ իբր Ամենայն Հայոց Կաթողիկոս, 1632 Օգոստոս 19ին՝ իր միտքը արտայայտած էր Հայաստանեայց Եկեղեցիին վերաբերմունքին մասին Հռոմի Եկեղեցիին հանդէպ, այսպիսի բանաձեւով. «...դի նախնի սէրն որ կայ ի մէջ Հայոցս եւ Լատինացւոցդ, զոր հաստատեցին Հարքն մեր, Սուրբն Սեղբեստրոս Պապն Հռոմայ եւ Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայոց Մեծաց, զնոյն եւ ի ձէնջ հաստատել խնդրեմք»<sup>64</sup>:

Մեր նախնեաց մօտ, դարերէ ի վեր ընդունուած, երկու Եկեղեցիներու միութիւնը արտայայտող, հայ աստուածաբանութեան խտացած բանաձեւն էր դա: Դ. դարու սկիզբէն ապրող զոյգ Հայրապետներէն աւանդ թողուած, Ս. Սեղբեստրոսի եւ Ս. Լուսաւորիչի օրինակը:

Միեւնոյն տեսակէտը յաջորդաբար յայտնած էին նաեւ անմիջական յաջորդները Մովսէս Տաթեւացիին, Փիլիպպոս եւ Յակոբ Դ. Ջուղայեցի էջմիածնի Կաթողիկոսները: Գրքերէ միեւնոյն բանաձեւերով թէ էջմիածնի եւ թէ Սոսոյ գահակալներէն ուրիշներ ալ: Անսովոր բան մը չէր երկու Եկեղեցիներուն միջեւ վերազարթնող սիրալիր յարաբերու-

<sup>64</sup> ԱՄԱՏՈՒՆԻ ԵՊՍ. Կ., Ոսկան վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը, Վենետիկ, 1975, էջ 287—301:

թիւնները ԺԶ—ԺԷ դարերուն, երբ ԺԴ—ԺԵ դարերուն քաղաքական վերիվայրումներէն յետոյ, թէ՛ Կիլիկիա եւ թէ՛ Արեւելեան Հայաստան, դոյզն հնարաւորութիւն մը ծայր տուած էր վերաշինութեան: Այսպէս նաեւ նոյն ԺԵ. դարուն մինչեւ վերջին տասնամեակին շարունակուած է այդ շարժումը:

Կիրակոս Վրդ. Թալիմցի, այլապէս յորջորջուած նաեւ Երեւանցի, Եպիսկոպոս, որ մաս կը կազմէր Յակոբ Ջուղայեցի Կաթողիկոսին դէպի Հռոմ ուղղուած չքախումբին, երբ այս ուղեւորութիւնը ընդհատուեցաւ Ջուղայեցի Կաթողիկոսին մահով (1680), տասը տարիներ անց, վերոյիշեալ Եպիսկոպոսը 1691 Փետր. 10ին Պոլիսէն նաւ կը մըտնէր, ուխտաւորի առաջադրանքով դէպի Հռոմ:

Վենետիկ հասած, տեղւոյն Հայ եկեղեցիին ժողովրդապետ Յովհաննէս Վրդ. Հոլովէն յանձնարարաբար մը առնելով՝ իր ուղին կը շարունակէր, եւ նոյն տարւոյն ամառուան վերջերը Հռոմ կը հասնէր:

Շուրջ երեք տարիներ, Հռոմի եւ Իտալիոյ այլեւայլ սրբավայրները այցելելէն յետոյ, մենք զինքը կը գտնենք իր հայրենիքը վերադարձած, 1694ի աշնան: Թղթակցութիւն մը, զոր Նահապետ Կաթողիկոս ունեցած է սոյն տարին Հաւատաստիւնի ժողովին հետ, Նոյեմբեր 3ին, կը տեղեկացնէ թէ Կիրակոս Վրդ. վերադարձեր է, եւ թէ իրեն հաղորդած է այն մեծ խնամքը եւ հոգածութիւնը որ կը տածէ սոյն ժողովը Ուրբանեան Վարժարանի հայազգի աշակերտներուն հանդէպ, զանոնք դաստիարակելու եւ կազմելու համար զարգացած հոգեւորականներ Հայաստանեայց Եկեղեցիին օգտին, որուն համար Կաթողիկոսը երախտապարտ կը ճանչնայ ինքզինքը<sup>65</sup>:

Որքան մեզի ծանօթ է, դա Նահապետ Կաթողիկոսին անդրանիկ թղթակցութիւնն է Հռոմի Եկեղեցիին հետ:

ՆԱՀԱՊԵՏ ԿԹՎՍ. Ի ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀՌՈՄԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՍՄԻՆԱՍ ԱՄԴԵՑԻՆ

1695 Սեպտ. 5 թուակիր ուրիշ գիր մը ուղղած է Նահապետ Կթղս., այս անգամ Իննովկենտիոս ԺԲ. Քահանայապետին, որուն

<sup>65</sup> AP. SO. Armeni, vol. 4, f. 307: — Թերզեան Վրդ. Մ., հրատարակած է 1894 Նոյեմբ. 3 թուակիր այս նամակին բնագիրը (ՀԱ., 1961, էջ 1045—6):

պատճէնը հրատարակեց Մեսրոպ Վրդ. Թէրզեան<sup>66</sup>:

Յաջորդ տարին, 1696 Յունիս 2 թուակիր նամակ մը կը ժամանէր Նահապետ Կթղս.ին, Յովհաննէս Գ. Սոպիէսկիի՝ Վիեննա քաղաքին դռներուն առջեւ 1683ին թուրք բանակին յաղթական Լեհ թագաւորէն: Այս նամակը կը տանէր լեհական պատգամաւորութիւն մը, առաջնորդուած լեհահայ Սիմէոն Վրդ. Բեդրոսովիչէն: Սոպիէսկի կը հրաւրէր Հայոց Կաթողիկոսը եւ Եկեղեցին վերահաստատել պաշտօնական եկեղեցական հաղորդակցութիւնը Հռոմի Եկեղեցիին հետ, խոստանալով օգնել հայ ժողովուրդին ու Հայաստանեայց Եկեղեցիին<sup>67</sup>:

Իսկական համամիութենական ծրագրի մը առաջարկն էր սա, մեր այսօրուան լեզուով:

Չանց կ'ընենք հոս այս պատգամաւորութեան մանրամասնութիւնները: Այսչափ միայն ըսենք որ Եան Գ. Սոպիէսկի թագաւորը նոյն տարին իսկ վախճանեցաւ, եւ Ս. էջմիածնի Վեհին այս յարաբերութիւնները առիթ տուին, Արեւելահայքի Վարդապետներուն այն հաստածին, որ հաշտ աչքով հանդիսատես չէր ըլլար անշուշտ Նահապետ Կթղս.ին յարաբերութեանց Հռոմի Եկեղեցիին հետ, որպէսզի Պարսից Շահին միջամտութեամբ դահլնկեց ընեն էջմիածնի օրինաւոր գահակալը:

1696 Նոյեմբ. 1ին Ստեփանոս Վրդ. Ջուղայեցին կը գրաւէր էջմիածնի Աթոռը:

1697 Փետրուար ամսուն մէջ, Մինաս Վրդ. Ամզեցին, որ ներկայ եղած էր դահաւակաւութեան այս տեղատուութեան, շուրջ երեք ամիսներ անց, կրցաւ իր Աթոռը վերադարձող Նահապետ Կթղս.ին այցելել ու շընորհաւորել անոր վերադարձը, ինչպէս որ կանխապէս տեսանք, նոյն ինքն Մինաս Վրդ. Օրագրութեան տուեալներէն:

Հռոմ ալ հեռուէն հետեւած ըլլալով Հայոց Աթոռին այս ելեւէջներուն, 1697 Ապրիլ 15ի ՀՍ.ի ժողովին նիստին ընթացքին, կ'որոշէր գրել Պարսից Շահին, որպէսզի նըման անհաճոյ դէպքեր չի կրկնուէին էջմիածնի գահակալին դէմ:

<sup>66</sup> ԹԻՐԶԵԱՆ Վ. Մ., Թուրք Սիրոյ Նահապետ Կաթողիկոսի, ՀԱ., 1961, էջ 1048—1050:

<sup>67</sup> AP. SO. Armeni, vol. 8, f. 621—622: ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Մ., Լեհաստանի թագաւոր Լամ Գ. Սոպիէսկի Ամալիք Հայոց Կաթողիկոսին, ԲՅՀ, 1978, էջ 150—156:

Կանխապէս, միեւնոյն ՀՍ.ի Ժողովը, 1697 Յունուար 28ին, Միւնեայ մեծամեծներուն եւ Կասպից Ծովուն շուրջը դտնուող Եպիսկոպոսներուն անունով հասած գըրուածքներուն ալ, ինչպէս նաեւ Նահապետ Կթղս.էն առաքուած 1695 Սեպտ. 5 թուակիր թուղթին բովանդակութիւնը վերաքննած էր: Անոնց բովանդակութիւնը կը դառնար առհասարակ երկու Եկեղեցիներուն հաղորդակցութեան շուրջ, որ պիտի դիւրացնէր միանգամայն Արեւմուտքի քրիստոնեայ իշխանութեանց, — որոնց մէջ ջերմագոյնը Լեհն էր, — հովանաւորութիւնը հայ քրիստոնէութեան վրայ: Հոռմի Ս. Ժողովը հոն կը յանգի որ պաշտօնապէս պատասխանէ Նահապետին կողմէ առ Իննովկենտիոս ԺԲ., 1695 Սեպտ. 5ին ուղղուած նամակին, պաշտօնական պատգամաւորութեամբ:

1698 Մայիս 3-ով, Իննովկենտիոս ԺԲ. Պապին պատասխանը առ Նահապետ Կթղս. Ամենայն Հայոց, պատրաստ էր: Համառօտագիծ (Breve) թուղթը կը սկսի հետեւեալ բառերով՝ «Graves etsi non insuetos»<sup>68</sup>:

ՀՍ.ի Ժողովը նոյն տարւոյն Յունիս 28ի նիստին մէջ կ'որոշէ կերպը առաքելիք պատգամաւորութեան, ընծաներուն ու թուղթին: Իսկզբան, Հոռմ ծրագրած էր առ այս կարգել լեհացի Հ. Իգնատիոս Զարոսիի Յիսուսեան Վարդապետը: Երբ իմացաւ թէ նա ոչ իսկ տեղեակ էր թղթակցութեանց, որոնք տեղի ունեցեր էին Հոռմի եւ Էջմիածնի միջեւ, կ'որոշէ յանձնել սոյն առաքելութիւնը հայագրի Վարդապետի մը, կարնեցի Սաչատուր Վրդ. Առաքելեանի, որ Պոլիս կը գտնուէր արդէն, քարոզութեամբ զբաղած:

Սաչատուր Վրդ. այն ինչ ստանձնեց այս առաքելութիւնը, չուշացաւ դիմել Մինաս Վրդ. Ամդեցիին, զոր ՀՍ. Ժողովին ուղղած իր նամակին մէջ կ'անուանէ «maximus amicus meus» — մեծագոյն բարեկամս, — եւ որմէ առաւ ջերմ յանձնարարագիր մը ուղղուած Նահապետ Կթղս.ին: Գիտենք որ Ամդեցիին 24 Հոկտ. 1698էն մինչեւ 1701 Սեպտ. 1 Պոլիս կը գտնուէր:

Սաչատուր Վրդ. 1699ին ամառը մեկնեցաւ Պոլիսէն դէպի Էջմիածին, ուր տօնեց

Ս. Գրիգոր Լուսաւորիչի տօնը, եւ յաջողութեամբ գլուխ հանեց իրեն յանձնուած առաքելութիւնը, որուն մանրամասնութեան վրայ հոս չենք ուզեր ծանրանալ:

1699 Հոկտ. 20 թուակիր, Մինաս Վրդ.ի Պոլիսէն գրած մէկ նամակէն, կ'իմանանք թէ Սաչատուր Վրդ. վերադարձեր է արդէն Էջմիածնէն: Ամիս մը յետոյ, Սաչատուր Վրդ. ալ 1699 Նոյեմբեր 23 թուակիրով, ուղղուած ՀՍ.ի Ժողովի Կարգինաչներուն, կը նկարագրէ իր առաքելութեան մանրամասնութիւնները<sup>69</sup>: Սոյն նամակին մէջ, ի միջի այլոց, վեր կը հանէ նաեւ Երուսաղէմի Պատրիարք Մինաս Վրդ.ին առ Նահապետ Կթղս. ուղղած թուղթին կատարած դերը ի նպատակի այդ առաքելութեան:

Ի պատասխան՝ Իննովկենտիոս ԺԲ. Պապին թուղթին, Նահապետ Կթղս. 1699 Յունիս 13ի դիրով, գրուած Երնջակայ Ս. Կարապետի վանքը, կը յայտնէ իր երախտագիտական զգացումները յարակից իր ուղղափառ դաւանութեան հետ:

Ինչպէս որ կ'արտայայտուէր Սաչատուր Վրդ. Առաքելեան, գլուխը յիշեալ պատգամաւորութեան, Ս. Էջմիածնի Վեհին ու Հոռմի Եպիսկոպոսին միջեւ Եկեղեցական հաղորդակցութիւնը իրողութիւն մըն էր: Նոյն եղած է անցուղարձերու իրազեկ ժամանակակից անձերու տպաւորութիւնն ալ<sup>70</sup>:

Կ. ՊՈԼՍՈՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՐԻԱՐԿԸ ՀԱՄԵՐԱՇԽ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Կ. Պոլսոյ Աթոռին վրայ 1700ին կը նըստէր Մխիթար Վրդ. Քիւրտիստանցի, ըստ այլոց Կորդուացի ալ կոչուած է: Սա ալ ուրեմն միաբանական սիրալիր վարմունք մը որդեգրած էր հանդէպ Հոռմի Եկեղեցիին: Տեղեկագիր մը, Պոլիսէն 1701 Օգոստ. 25 թուակիր Հոռմ առաքուած, կը հաղորդէ թէ Մխիթար Պատրիարք, անցեալ տարի, — ուրեմն 1700ի ընթացքին, — Ս. Էջմիածնի եւ Երուսաղէմի Աթոռներուն օրինակին հետեւելով, վերցուցեր է Քաղկեդոնի Ժողովին ու Ս. Լեւոն Պապին դէմ նշովքները<sup>71</sup>: Բարեկամական յարաբերութիւններ ալ կը մշակէր Միջին Եւրոպայի երեք մեծ պետու-

թեանց դեսպաններուն հանդէպ, Աւստրիոյ, Լեհաստանի եւ Վենետիկի հանրապետութեան: Զայս վեր կը հանէ եւրոպացի բարձր եկեղեցական մը, Կարմեղեան P. David di S. Carlo, որ Առաքելական այցելուի հանգամանքով Պոլսոյ լատին վանքերուն վրայ զբոսած էր Հոռմէն: Այս վերջինս 1700 Օգոստ. 3 թուակիր նամակով՝ շահեկան տեղեկութիւններ կուտայ նաեւ ժամանակին հայ պատրիարքութեան անցուղարձերու մասին: Իրմէ զատ ուրիշ օտար միսիոնարներ ալ ատոր արձագանգը տուած են:

Կը դրէ սոյն Առաքելական Այցելուն, թէ Մխիթար Պատրիարք մի առ մի հրաւիրած է վերոյիշեալ պետութեանց դեսպանները՝ Հայոց Եկեղեցին, Ս. Պատարագին մատուցման մասնակցելու: Զանոնք ընդունած է արքայական շուքով: Ս. Սորհուրդի մատուցման ասէն, պատարագիչ Արքեպս.ը բաժակին մէջ ջրախառնումը զանց չէ ըրած. իսկ «Յիշեալ»ներու կարգին ալ բարձրաձայն յիշատակութիւնը ըրած է Իննովկենտիոս ԺԲ. Պապին եւ Արեւմուտքի քրիստոնեայ իշխաններուն համար աղօթած են: Եկեղեցական դասը պատասխանած է: Յիշեալ տեղեկատուն կը վկայէ թէ Մխիթար Պատրիարքին եկեղեցական հաղորդակցութիւնը Հոռմի Եպիսկոպոսին հետ իրականութիւն մըն էր:

Միեւնոյն տեղեկատուն շարունակելով կը դրէ թէ յետ եկեղեցական արարողութեան, ի պատիւ դեսպաններու սարքուած ճաշի ընթացքին, Իննովկենտիոս ԺԲ. Պապին կենացը բաժակաճառեր տեղի ունեցած են<sup>72</sup>:

Բարեկամական այս ցոյցը, թէեւ կրօնական կլիմայի մէջ, Վիեննայի դրան առջեւ յաղթական պետութեանց դեսպաններուն հանդէպ, մանաւանդ Լեհացի դեսպանին, անշուշտ առանց կապակցութեան չէր Եան Գ. Սոպիէսկիի առ Նահապետ առաքած պատգամաւորութեան հետ, ոչ ալ աննշմար կրնար անցնիլ Օսմանեան պետութեան աչքին:

<sup>72</sup> G. Hofmann, Il Vicariato Apost. di Costantinopoli (1453—1830), Roma, 1935, p. 78—79. Ստեփանոս Վրդ. Լեհացին կը յիշատակէ իր Տարեգրութեան գրքին մէջ (էջ 188) Մխիթար Եպս.ն Մոկաց, Լալուակ Միխայ կոչեցեալ, որ ի Լվով, Վարդան Արքեպ. Յունանեանի առջեւ, 1693 թուին, պաշտօնապէս «գաւանդութիւն ուղղափառ հաւատոյ» ըրած է, այս է՝ յայտնած է հաղորդակցութիւնը Հոռմի Եկեղեցիին հետ: Նոյն աճն է արդեօք Մխիթար Կորդուացիի հետ: Հաւանորէն:

Վերոյիշեալ տեղեկատուն, David di S. Carlo, Մինաս Վրդ. Ամդեցիի մասին ալ կ'արտայայտուի այսպէս. Ամդեցին, կը դրէ նա, Պոլիս կը գտնուէր արքունի Պէրաքին հետամուտ, մի գուցէ կորսնցնէ Երուսաղէմի իր Աթոռը: Սա ուժեղակազմ անձ մըն է, շուրջ 65ամեայ, «վարդապետական չափաւոր հմտութեամբ» օժտուած, սակայն «չատ արթուն, վարժով օրինակելի, ըմտիք կաթողիկէ մըն է»: Թէեւ սա յառաջագոյն որոշ ջանք ի գործ կը դնէր, զգուշանալով հրապարակել իր ուղղափառ համոզումները եւ հաղորդակցութիւնը Հոռմի Եկեղեցիին հետ, չկորսնցնելու համար իր ազգայիններուն վստահութիւնը. այժմ այլեւս ոչ. հրապարակաւ կը յայտնէ իր ներքին համոզումները: Լատին եկեղեցականը շարունակելով իր հաղորդագրութիւնը, կը յարէ եւս թէ Մինաս Վրդ. ալ Լեհ դեսպանը հրաւիրած է, եւ ընդունած այն հանդիսաւորութեամբ ինչ որ Մխիթար Պատրիարք, ջրախառնելով պատարագ է, Պապին դիտաւորութեան աղօթած: Իր Վեհին, Նահապետ Կաթողիկոսի օրինակը անշուշտ խրախուսիչ էր իրեն համար:

Զարմանք պէտք չէ ազդէ ԺԲ. դարու վերջին տասնամեակին, յիշեալ հայ բարձր եկեղեցականներու համակրանքը Լեհ պետական իշխանութեանց հանդէպ: Երեմիա Զէլչպի, ժամանակին պոլսահայ զարգացած եւ ազդեցիկ դէմքերէն, 1679 թուին, եօթանասնէն տուննոց ներքոյի Տաղ մը ձօնած է Յովհաննէս Երրորդ Սոպիէսկիին, ուր կարօտագին կ'ըսէ. Իցի՛ւ այդպիսի իմաստուն թաղաւորի մը հպատակ ըլլային հայերը:

Հուսկ վերոյիշեալ տեղեկատուն կը կրնք իր գրութիւնը այսպէս. Թէ Մխիթար Պատրիարք եւ թէ Մինաս Վրդ. աղքատ են քան Յոյներու Պատրիարքը, վասնզի ասոնց զբամին մեծ մասը թուրքին ձեռքը կ'երթայ<sup>73</sup>:

Այս դէպքերը բաւական են ցոյց տալու

<sup>73</sup> G. Hofmann, անդ, p. 78. Այս եւրոպացի տեղեկատուն, 1700 թուին Մինաս Վրդ.ի արտաքին կերպարանքին դատելով, անոր կու տայ 65ամեայ տարիք: Հ. Ակինեան, իր բազմիցս յիշուած յօդուածին մէջ իբր 1630ին ծնած կը զնէ զԱմդեցին: Մինաս Ամդեցին ալ, իր Թուրք Օրինութեան առ Մայրաքաղաքն Ուտիա, կը յայտարարէ թէ սոյն տաղը գրած է 1657 թուին: Գիտենք թէ նա 1655 թուին է որ Վարդապետական գաւազան առաւ: Եթէ այդ տարի շուրջ 25ամեայ ենթադրելու ըլլանք, Հ. Ակինեանի վարկածը իբր 1630ի շուրջ ծնած, լաւագոյն կը համարինք: — Հմմտ. նաեւ ԵԶԲ, էջ 526—536:

<sup>68</sup> De Martinis, Jus Pontificium de Propaganda Fide, Roma 1894, vol. II. p. 183—184, XXV. Դիտելի է որ Իննովկենտիոս ԺԲ. 1698 Յունիս 6 թուին Աղուանից Սիմէոն Կթղս.ին եւ Վլաս Եպս.ին ալ պատասխանեց առանձին նամակներով:

<sup>69</sup> AP. Scritture Orig. Congregazioni Generali = SOCG. vol. 537. f. 248—249.

<sup>70</sup> AP. SOCG. vol. 537. f. 252.

<sup>71</sup> AP. SO. Armeni, vol. 4. f. 724—726.

ժէ. դարուն վերջին տասնամեակներուն, Հայաստանեայց Եկեղեցիին պաշտօնական որոշ շրջանակներու մէջ տիրող կլիման ինչ կը հայի Հոռոմի Եկեղեցիին հետ հաղորդակցութեան հարցին:

Սաչատուր Վրդ. Առաքելեան իր 1699 Նոյեմբ. 23 թուակիր տեղեկագրին մէջ, — որուն ակնարկեցինք վերեւ, — կը հաստատէ թէ Կ. Պոլսոյ վաթսուն աշխարհական անձնաւորութիւններ տուած են իրենց հաւանութիւնը ի նպաստ միաբանական բանակցութեանց երկու Եկեղեցիներուն: Մեծահարուստ հայազգի Ազարիա յայտնած է թէ տրամադիր է իր բոլոր ստացուածքը կապել այդ դատին:

Ժամանակակից արժանահաւատ հեղինակ մըն ալ, Ստեփանոս Վրդ. Լեհացի, կը վկայէ թէ «Մինաս Վրդ. — զոր ինքը Թօխաթեցի կ'անուանէ, — Արքեպ. եւ Առաջնորդ Երուսաղէմի, ի սոյն ամի Դեկտ. ԺԱ., 1699 տարւոյն, ի Կ. Պոլսէ առ նոյն Սրբազան Փափն (= Իննովկենտիոս ԺԲ). զրեաց դաւանելով այսպիսի բանիւք. Դաւանիմք եւս զվեհապետն Հոռոմայ ճշմարիտ յաջորդ զլիսաւոր Առաքելոյն Պետրոսի, զլուխ ամենայն հաւատացելոց, ծայրագոյն դատաւոր ի մէջ Եկեղեցւոյ սրբոյ եւ ընդհանրական վարդապետ բոլոր Եկեղեցւոյն Քրիստոսի: Դաւանէ ի Քրիստոս զերկու բնութիւնս, զՀոռոմոյն Սրբոյ բխումն ի Հօրէ եւ յՈրդւոյ, զներկայ արքայութիւնն եւ զերանելի կեանս սրբոց, զՔաւարանն եւն... Աղերսէ զօրհնութեան նամակ ի սուրբ Հայրապետէն, որոց թղթոց օրինակքն են առ իս»<sup>74</sup>:

Սաչատուր Վրդ. Առաքելեան, իր 1700 Մարտ 15 թուակիր նամակին մէջ, որ Պոլսէն ուղղած է ՀԱ. ի Ժողովի Քարտուղարին, կը յանձնարարէ ասոր մեծ նկատողութեան առնել ինչ որ անցեալ զրութիւններու մէջ հաղորդած էի Երուսաղէմի Աթոռի մասին, — Հայաստանեայց Եկեղեցիի Պատրիարքութեան ըսել կ'ուզէ, — վասնզի անոր Առաջնորդը «մեծապէս օգտակար է հաւատքին»:

Նոյն տարին, Սեպտ. 13 թուակիրով մըն ալ, ուր կը յայտարարէ թէ Կղեմէս Կալանոսին ծանօթ եռահատոր գիրքէն երեք օրինակ-

<sup>74</sup> ՄՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ԼԵՀԱՑԻ, Ստ. Ռօշքայ, «Ժամանակագրութիւն», հր. Հ. Հ. Ոսկեան, Վիեննա 1964, էջ 190:

ներ յանձնած էր Նահապետ Կթղս. ին, զէպի Ս. էջմիածին իր պատգամաւորութեան առիթով, կը հաւատտէ նաեւ թէ շատ լաւ յարաբերութեան մէջ է Մինաս Վրդ. Ամղեցիի եւ Մխիթար (Կորդուացի) Պատրիարքներուն հետ<sup>75</sup>: Այս վերջինիս մասին, 1700 Դեկտ. 21 ի գիրով, Սաչատուր Վրդ. Առաքելեան կը հաղորդէ թէ դահլեյց եղած է, փառասէր հայ Վարդապետի մը կողմէ թուրքին միջամտութեամբ:

Այս վարդապետին անունը չի տար նամակագիրը, միայն կը հաստատէ թէ ուղղափառ հաւատքի դէմ հալածանքի հարց չկայ, եւ թէ միայն Աթոռի մրցակցութիւն է:

Գիտենք որ յիշեալ վարդապետը է Մելքիսեթ Սուպհի, որ կրկին գրաւեց Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը: Շատ հաւանօրէն Մխիթար Պատրիարքին անհեռատես արարքին անխուսափելի դայթակղութիւնը պարսկելու դիտումով: Այլապէս Մելքիսեթ Սուպհի Պատրիարքն ալ, իր եկեղեցարանական համոզումներով ու դաւանանքով Մխիթար Պատրիարքէն տարբեր չէր:

Բայց մենք Մինաս Վրդ. Ամղեցիին այսպիսի համոզումները ճանչնալու համար չենք մնար միայն ժամանակակից անձերու վկայութեան, վասնզի ունինք մեր տրամադրութեան տակ իր իսկ զլիսաւոր վկայութիւնը, 11 Դեկտ. 1699 թուակիր, Պոլսէն ուղղուած առ Իննովկենտիոս ԺԲ.: Այս վաւերաթուղթին ամբողջական պատճէնը ընթերցողը կը գտնէ այս զրութեան վերջաւորութեան: Անոր բովանդակութիւնը ինքնին պերճախօս է<sup>76</sup>:

<sup>75</sup> AP. SO. Armeni, vol. 4, ff. 664, 674, 676.

<sup>76</sup> AP. SOCG. vol. 537, f. 244. Նշանեան եպս. Մ. Օրագրութիւն Երեմիա Չելեպիի, էջ ՀԹ—Ձ, ԾՆԹ. 1, Մինաս Վրդ. Ամղեցիի Օրագրութիւնի ձեռագիրէն (Թղ. 246ր) կը կոչէ հետեւեալ անցքը. «Պատրի Պետրոսն եկաւ ընդ Սաչատուր Վրդ. ին, զի գնալոց է ի Հոռոմ. զրոց շատ եւ գիր ետու փափին համար»: Պատրի Պետրոսը է այն Յիսուսեան միսիոնարը, որ ընկերացաւ Սաչատուր Վրդ. Առաքելեանին, որ Նահապետ Կթղս. ին իրը Նուիրակ առաքուեցաւ Իննովկենտիոս ԺԲ. Պապէն, 1699 տարին: Ասոնք իրենց պատգամաւորութենէն վերադարձած, անշուշտ Մինաս Վրդ. Ամղեցիին այցի դացած էին, նաեւ իրեն հաղորդելու համար իրենց տեսակցութիւնը էջմիածնի վեհաժողովին: Հոռոմ տանելիք՝ Պատրի Պետրոսին Ամղեցիին կողմէ յանձնուած գիրք առ Փափն, անշուշտ 1699 Դեկտ. 11ին առ Իննովկենտիոս ԺԲ. գրած թուղթն է, զոր վերեւ յիշատակեցինք: Անոր յաջորդին, Կղեմէս ԺԱ. ին գրուածը ուրիշ թուղթ է:

ՄԻՆԱՍ ՎՐԴ. ԱՄԴԵՑԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Հոս կ'ամփոփենք միայն իր ընդհանուր գիծերուն մէջ յիշեալ թուղթին հիմնական կէտերը: Թուղթը տիտղոսագրուած է. «Երեցս Երանեալ Սուրբ Հայր ամենից ի Քրիստոս հաւատացելոց եւ զերակատար զլուխ Ընդհանուր Եկեղեցւոյն Քրիստոսի, Իննօջնցիոս ԺԲ. Սրբազան Պապ»:

Ողջոյն, սէր, որդիական երկրպագութիւն եւն.: Վաղուց կ'ուզէի յայտնել Ձեզի մեր իղձը. առիթը ներկայացաւ երբ Ձեր Սրբութեան գիրը հասաւ հոս Կ. Պոլիս, Ձեր սիրելի որդի Սաչատուր Վրդ. ին, մեզի հարգատ բարեկամ, որ մտերմաբար հաղորդեց ինձի Ձեր գրածները: Ուստի ընկերացող նամակով մը զինքը փութով զրկեցինք մեր Եղբօր Նահապետ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Ամէն ինչ յաջող անցաւ, ինչպէս որ յայտնի է Ձեզի ուղղուած գիրէն մեր Գերջարդոյ Եղբօրմէ (Կաթողիկոսէն) ու Սաչատուր Վրդ. ին առ Ս. Ժողով գրածէն:

«Աստանօր, կը շարունակէ Ամղեցին, ոչ միայն հաստատեմք զգրեցեալս ի վերյարգելի Եղբօրէ մերմէ Նահապետէ, այլ եւ բացայայտեմք եւ բացատրեմք զգրեալսն ի նմանէ: Սակս որոյ ծանուցանեմք Սրբութեան Ձերում, զի թէպէտ եղեն ոմանք, որք այլեւայլ խօսեցեալք իցեն ընդդէմ Առաքելականի Աթոռոյ, սակայն այնպիսիքն ի մէնջ չեն ընդունեցեալք, այլ բացահերքեալք: Վասնզի մեք կամք հաստատուեմք ի նոյնում դաւանութեան եւ միաբանութեան գոր արարին Սուրբ Սեղբեստրոս ծայրագոյն Հայրապետն Հոռոմայ եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր: Վասնզի դաւանիմք զսրբազան Առաքելն Պետրոս փոխանորդ Քրիստոսի ի վերայ բոլոր Եկեղեցւոյն նորին, զլուխ եւ իշխան Առաքելոց Սրբոց, վէմ անուանելի ի դրանց զԺողոց, ծայրագոյն հովիւ հօտին Քրիստոսի, եւ որոյ ոչ պակասեցաւ հաւատն ըստ բանիցն Քրիստոսի եւ Ժառանգորդ բանալեաց արքայութեան երկնից»:

«Դաւանիմք եւս զվեհապետն Հոռոմայ ճշմարիտ յաջորդ զլիսաւոր Առաքելոյն Պետրոսի, զլուխ ամենայն հաւատացելոց եւ քրիստոնէից, եպիսկոպոսապետ ամենայն եպիսկոպոսաց, Հայրապետ ամենայն Պատրիարքաց, զլուխ ամենայն Սիւնհոգոսաց, ծայրագոյն հայր ամենայն հաւատացելոց,

ծայրագոյն դատաւոր ի մէջ Եկեղեցւոյ Սրբոյ, եւ ընդհանրական վարդապետ բոլոր Եկեղեցւոյն Քրիստոսի»:

Այնուհետեւ կը շարունակէ դաւանութիւնը ի Ս. Երրորդութիւն, բխումն Ս. Հոգւոյն ի Հօրէ եւ յՈրդւոյ, մի անձն ի Քրիստոս, կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ անշփոթ միութեամբ. երկու կամք, երկու ներդրութիւն. Սուրբերը փառաւորեալ յետ մահու. դժոխք ու քաւարան, առանձնական ու ընդհանրական դատաստան: Իր թուղթը կը կնքէ այսպէս. «Վերջապէս ընդունիմք զայն ամենայն զոր ընդունի Ս. Եկեղեցի Հոռոմայ, եւ հերքեմք զայն ամենայն զոր նա բացահերքէ...», ու կը յայտարարէ իր համաձայնութիւնը իր վեհաժողովին հետ, այսինքն Նահապետ Կաթողիկոսին, համաձայն Ս. Լուսաւորչի, Որդւոց եւ թոռանց, Ներաչս Ծնորհալիի, Նարեկացիի, Լամբրոնացիի եւ մեր բոլոր այլ Հայրերուն — հնազանդելոց հռոմէակաւի Եկեղեցւոյ:

Անցեալին՝ տգիտութեամբ թերացեր եմ, կը գրէ, ու կը խնդրէ ներումն առաքելական գիրով, եւ միանգամայն յանձնարարել մեզ Երուսաղէմի Լատիններուն, որպէսզի անոնք ալ պահեն միեւնոյն սէրը:

Կը ստորագրէ «Մինաս Եպս. վերատեսուչ Սուրբ Աթոռոյն Առաքելոյն Յակոբայ որ ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի վիճակ ազգին Հայոց, նաեւ ամենայն հնազանդեալք իմ ընդ ինեւ»<sup>77</sup>:

Եկեղեցական հաղորդակցութեան այս գիրը, ՀՍ. ի Ժողովին 1701 Մարտ 8ի նիստին, Կարդինալ ձուտիչէի կողմէ կը զեկուցուի: Ժողովը կը հաստատէ թէ Մինաս Վրդ. Ամղեցին ալ համաձայն է իր Կաթողիկոսին, Նահապետի, Հոռոմի Եկեղեցիին հետ Հայաստանեայց Եկեղեցիի հաղորդակցութեան: Զեկուցող Կարդինալը կը վկայէ եւս թէ Սաչատուր Վրդ. Առաքելեան ալ յայտնօրէն կը վկայէ անոնց անկեղծութեան: Հուսկ կը յաւելու Կարդինալը թէ Երուսաղէմի Պատրիարքը, իբրեւ նպաստաւոր միջոց սերտացնելու համար երկու Եկեղեցիներու միջեւ միաբանական այս կապը, կ'առաջարկէ նաեւ զբարկան ցոյց մըն ալ, այսինքն վերահաստատել նախկին սովորութիւնը Լեհաստանի եւ Հունգարիոյ հայազգի գաղութի եկեղեցիներուն մէջ պարբերաբար հանգանակութիւն կատարել ի նպաստ Ս. Գերեզմանի լոյսին՝

<sup>77</sup> AP. SOCG. vol. 537, f. 244:

լուսզին, զոր զեկուցողը կը թարգմանէ Pretium luminis, — ինչ որ 38 տարիներէ ի վեր, այսինքն 1663 թուականէն ասդին դարձած ըլլալը կը յայտարարէ զեկուցող Կարգինալը:

Մինաս Վրդ. Ամդեցիի կողմէ, Երուսաղէմի Պատրիարքի իր հանգամանքին մէջ, շատ բնական էր նման առաջարկ մը, զոր Հոռոմ ալ իր կարգին սկզբունքով չի մերժեր: Խաչատուր Վրդ. Առաքելեան եւս, Պոլսէն առ ՀՍ.ի Ժողովին Կարգինայնեքը, 1699 Նոյեմբ. 23 թուին ուղղած թուղթին մէջ կը յանձնարարէ Մինաս Ամդեցիին այս խընդրանքը իբր յարմար միջոց խրատուելու համար Եկեղեցիներու միջեւ սէրը եւ միաբանութիւնը<sup>78</sup>:

ՀՍ.ի Ժողովը լրջօրէն կը զբաղի այս հարցով, եւ իսկոյն կը գրեն Լեհաստանի եւ Վիեննայի իր Առաքելական Նուիրակներուն, որպէսզի պէտք եղած լուսարանութիւնը հաւաքեն եւ Ս. Ժողովին առաքեն:

Լեհաստանի Տէատինեան Միսիոնին վերակացուն, Հ. Ակիորսի, կը հաւաքէ հարկ եղած տեղեկութիւնները ու կը հաղորդէ թէ Շարաթ օրերը, երեկոյեան ժամասացութեան, ըլլայ Լվովի մայր տաճարին ըլլայ միւս եկեղեցիներուն մէջ կը հանգանակուէր: Իւրաքանչիւր եռամեային Երուսաղէմի Պատրիարքին Նուիրակը կ'այցելէր, տանելու համար զոյացած գումարը: Այս հանգանակութիւնը սակայն 38 տարիներէ ի վեր դադարած է, նաեւ անոր համար որ զոյացած գումարը յաճախ հազիւ կը գոցէր Նուիրակին անձնական ծախսերը:

Յիշեալ թղթակիցը կը յաւելու եւս թէ Լվովի ներկայ հայ Արքեպիսկոպոսը տրամադիր է վերահաստատել նախկին սովորութիւնը, նկատած նաեւ Երուսաղէմի Պատրիարքին հազորդակցութիւնը կաթողիկէ Եկեղեցիին հետ, պայմանաւ սակայն որ այդ գումարը չգործածուի բայց եթէ Ս. Գերեզմանին եւ ոչ թէ Պատրիարքին անձնական ծախսերուն որ, յաջորդեց կ'ըսէ, իր նախորդը գահընկեց ընելով 30.000 տալլէրի: Հարկ ալ չկայ, կ'ըսէ, որ Նուիրակ զրկէ դրամը վերցընելու համար. Արքեպոս.ը պիտի հոգայ զայդ հասցնել Ս. Գերեզմանին յարմարագոյն միջոցներով:

Հայ Արքեպոս.ը որ յանձնառու եղած է ընդառաջ գալ Երուսաղէմի Պատրիարքին

յիշեալ առաջարկին էր Վարդան Եպո. Յովնանեան, ծագումով Եւզոկիացի, Ուրբանեան վարժարանին նախկին աշակերտ, որ երկար տարիներ քարոզութեամբ անցուցած էր Հայաստանի Արեւելեան Նահանգները, մանաւանդ Բասենի կողմերը, մինչեւ 1686 թուականը, ուսկից Լվով վերադարձած էր, յաջորդելու Նիկողայոս Եպո. Թորոսովիչին: Վախճանեցաւ այս թղթակցութենէն սակաւ տարիներ յետոյ, 1703 թուին:

Հոռոմի աչքին միշտ ծանր նկատուած է եկեղեցական իշխանութեան հասնիլ դրամով. Սիմոնակաւուքիւն էր: Եկեղեցական կանոններէն խստիւ արգելուած, առաքելական ժամանակներէն սկսեալ, իշխանութեան անվաւերութեան դատակնիքով: Օրէնք որ համաձայն էր նաեւ Հայաստանեայց Եկեղեցիին հարազատ կանոնական սկզբունքներուն, ինչպէս որեւէ վաւերական Եկեղեցիի համար: Դժպէտի դարաւոր իրականութիւններ սակայն, իսլամ իշխանաւորներուն քմահաճոյքին պարտադրանքներով, գրեթէ օրէնքի կարգ անցուցած էին ժամանակին ծաւալած եղծումները, Արեւելք, ուստի նաեւ մեր Եկեղեցիին մէջ: Հոռոմ, ազատ քրիստոնէութեան մէջ, չունէր փորձառութիւնը ստրկութեան: Ահա թէ ինչու կանգ կառնէ ՀՍ.ի Ժողովը անդրադոյն ճշդումներ կատարելու համար, նախ քան համաձայնիլը Մինաս Ամդեցի Պատրիարքի առաջարկին, ու կը հրահանգէ Ժողովը որպէսզի անդրադոյն լուսարանուի թէ որքան հիմնուած է Յունանեան Արքեպոս.ին հաստատածը<sup>79</sup>:

ՄԻՆԱՍ ՎՐԴ. ԱՄԳԵՑԻ ԵՒ ԲՈՂՈՎ

Գառնիկ Գէորգեան, իր Չնփուշն անիրաւուած յօդուածին մէջ (Բաղմ. 1864, էջ 126) կը գրէ թէ Մինաս Վրդ. երկիցս Եւրոպա գացած է. կը նշանակէ թուականներն ալ, 1684—5 եւ 1695, առանց անդրադոյն մասնաւորելու: Մ. Եպո. Նշանեանի լոյս հանած Ամդեցիին սղաղբեալ Օրագրութիւնը բան չի ըսեր այս մասին, դատելով այդ զրուածքին մեզի ծանօթ հատակոտոր հատուածներէն:

Մեզի ծանօթ է միայն նոյն ժամանակի, Բեթղէհէմի Եղիա Եպո.ի, — Միարան Ս. Յակոբի, — մէկ նամակէն 1700 Օգոստ. 21

<sup>79</sup> AP. Acta, vol. 71, f. 67—70; SOCG. vol. 538, f. 274—278:

Թուին, Վենետիկէն գրուած Հոռոմ, ՀՍ.ի Ժողովին, ուր նա կը գրէ թէ Մինաս Վրդ. Ամդեցի Լիվորնոյ քաղաքը՝ Արեւելք մեկնելու վրայ է, եւ թէ մեծապէս պիտի մխիթարուէր իր կողմէ եղած միաբանական գիրին պատասխանը ընդունելով<sup>80</sup>:

1700 Նոյեմբ. 11ին արդէն Մինաս Վրդ. Պոլիս վերադարձած ըլլալը կ'իմանանք Խաչատուր Վրդ. Առաքելեանի կողմէ Հոռոմ զրկուած մէկ ուրիշ նամակէն. անշուշտ վերադարձ Իտալիայէն<sup>81</sup>:

Սերաստիոյ Ս. Նշան վանքի գրչագիրներէն թիւ 72 Ձեռ. 1344ին գրչուած Աւետարանին վերջին Յիշատակարանը (թղ. 594), ուր կ'ըսուի թէ գրչագիրը սեփականութիւն եղած է Մահտեսի եւրաբերին «ի թվին ՌձՆԸ (1699), ի ժամանակս թագաւորութեան Սուլթան Մուստաֆային, որ Հայոց պարիչութեան ամին, ի կաթողիկոսութեան Տէր Նահապետին եւ Սուրբ Երուսաղէմայ Առաջնորդութեան Տէր Մինաս Վրդ.ին, եւ սակաւ գիրս ձեռամբ Տէր Յակոբին»<sup>82</sup>:

1701 թուին Յիշատակարան մը, նոյն թուականին Երուսաղէմ Մարտիրոս Վրդ.է գրչուած նարեկի մը մէջ կայ հետեւեալը. «ի Առաջնորդութեան Սուրբ Երուսաղէմայ Տեառն Մինասայ Վրդ.ին» եւ Սուլթան Մուստաֆայի թագաւորութեան ատեն:

Յաջորդ տարին ալ, 1702 թուին ուրիշ Յիշատակարան մը կը գրէ թէ Մինաս Վրդ. Ամդեցի, Յակոբ ՔՅԵ. Եւզոկիացիի տաղաչափեալ Սաղմոսարանը եւ Պոլսոյ հրկիզումի պատմութիւնը բովանդակող գրչագիրը, — Ս. Յակոբի թիւ 892 ձեռագիրը՝ ներկայիս, — նուէր տուած է «նորընծայ Պետրոս ՔՅԵ.ի» ի վայելումն անոր եւ Աստուածատուր որդիին, որոնք իբր ուխտաւոր Երուսաղէմ կը գտնուէին<sup>83</sup>:

Ուրեմն Ամդեցին տակաւին Երուսաղէմ է իբր Պատրիարք, 1702 թուին:

ՄԻՆԱՍ ՎՐԴ. ԱՄԳԵՑԻ ԵՒ ԲՈՂՈՎ

Աւետիք Եւզոկիացին, Երզնկայի Առաջնորդ, 1701 թուին Դեկտեմբերին Պոլիս մըտաւ: Շուրջ ամիս մը Եփրեմ Ղափանցի

<sup>80</sup> AP. SO. Armeni, vol. 4, f. 647:  
<sup>81</sup> AP. SO. Armeni, vol. 4, f. 626:  
<sup>82</sup> ԳՈՒՇԱԿԵԱՆ ԱՐՔԵՊ. Թ., Յուլիան Գեորգիանցի Սերաստիոյ Ս. Նշան վանքի, էջ 54:  
<sup>83</sup> ԵՅԶ, հտ. Գ., էջ 143 եւ 405:

Պատրիարքին ծառայելէ յետոյ, արդէն գլխավորութիւնը ծայր տուած էր երկուքին միջեւ 1702 Փետր. 12էն սկսեալ, եւ որ յանդեցաւ Եփրեմին հեռացումով Պոլսոյ Աթոռէն: 1702 Մարտ 7ին Աւետիք հաղած էր արդէն Պատրիարքական գափքանը, ինչպէս որ կը տեղեկացնէ Ֆրանսայի դեսպանը, Marquis de Ferriol, իր մեծաւորներուն<sup>84</sup>:

Մենք հոս Աւետիք Պատրիարքին գործունէութենէն պիտի նկատենք միայն ինչ կը հայի անոր ելոյթին Երուսաղէմի Պատրիարք Մինաս Վրդ.ին հանդէպ: Աւետիք իր ինֆնակեմսագրութեան մէջ, գրուած Փարիզ, իր արգելափակումի տարիներուն, — անշուշտ ոչ առանց գունաւորելու դէպքերը, — ուզելով պատմել իր վերաբերմունքը Երուսաղէմի Պատրիարք Մինաս Ամդեցիին հանդէպ, կը գրէ թէ Երուսաղէմէն 12 արեղաներու պատգամաւորութիւն մը Պոլիս փութացեր էր, գանդատագիր մը մատուցանելու համար Սուլթանին, ընդդէմ իրենց Պատրիարքին, Մինաս Վրդ.ի: Անցողակի նշենք հոս որ, բուն իսկ ժամանակակից վիճակներուն համաձայն չորս էին եւ ոչ տասներկու, Երուսաղէմէն եկած Արեղաները: Նոյնը կը հաստատէ Չամչեան:

Այս դժգոհներու ամբաստանագիրը, Աւետիքի ինքնակենսագրութեան համաձայն, կը կայանար հետեւեալ կէտերուն մէջ: Մինաս Վրդ. Երուսաղէմի Աթոռը ծանրաբեռնած էր պարտքերով, — մինչեւ 100.000 զուռուշի կը հանն գումարը, — թէ եկեղեցական սպասները Պոլիս անդիւսցի վաճառականներու զրկած է ծախելու համար եւս, ցրած է կրօնաւորները, գնեցէք ձեր դրամով ապրուստնիդ եւ զգեստնիդ ճարեցէք ըսելով: Մինչդեռ, կը գրէ Աւետիք, Գալուստ Վրդ. Կայծակ եւ Մատթէոս Սարը, Սոյ նախկին կաթողիկոսը, աչքերնին տնկած էին Երուսաղէմի Աթոռին վրայ, Սուլթանը զինքը կանչած է ըսելու համար. Բեգի կը յանձնար Ս. Յակոբի վանքը<sup>85</sup>:

Աւետիք իր այս ինքնակենսագրութեան մէջ՝ աւելի չէ արձանագրած: Հաշուին չէր գար: Բայց իրականութիւնը բոլորովին տարբեր է, ինչպէս յաջորդաբար պիտի տեսնենք:

<sup>84</sup> Brosset M., Mélanges Asiatiques, bull. Académie Imp. de St. Petersburg. t. VII, p. 202—5, 234: — ՉԱՄՉԵԱՆ Հ. Մ., անդ, էջ 732—734:  
<sup>85</sup> Brosset M., Mélanges Asiatiques, p. 202—204, note 58:

<sup>78</sup> AP. SOCG. vol. 537, f. 248—249:

ինչ կը հայր Մինաս Ամզեցիին գոյացած պարտքերուն պատասխանատուութեան, ահա իրականութիւնը: Նահապետ Կաթողիկոսին մէկ գիրը, 1703 Փետր. Թուակիր, կ'ենթադրէ թէ Ս. Յակոբ պարտքերու տակ է: Նմանապէս Զաքարիա Սարկաւազ իր Պատմութեան մէջ: Մինաս Ամզեցիին ալ չի մերժեր եղելութիւնը, սակայն ասոր պատասխանատուն վանքին երկարամեայ գործակալն է, կ'ըսէ, Պապա Մինաս<sup>86</sup>:

Եւ իրաւամբ, 1691 թուին Յիշատակարան մը, Միքայէլ դրչին, Նարեկացիի Աղօթամատեանի գրչութեան առթիւ, ուր կ'ըսուի թէ հայ մեծամեծները խնդրեցին Եղիազար Կթղա-էն, որպէսզի Մինաս Ամզեցիին կարգէ Երուսաղէմի Պատրիարք, իբր շարժառիթ ունենալով «զի հասեալ օգնեսցէ յարարարեալ պարտուց գլխադրի Ս. Յակոբայ»: Ուրեմն վանքը արգէն ծանրաբեռնուած էր պարտքերով երբ Մինաս Վրդ. կը խնդրուէր իբր Պատրիարք:

Ժամանակակից արժանահաւատ անձեր կը վկայեն Մինաս Վրդ. ի ժուժկալ կենցաղավարութեան: Ահա անոնցմէ մէկը, զոր մենք հոս Անանու կը կոչենք, եւ որ գրած է Աւետիքի պատրիարքութեան սակաւ տարիններուն պատումը: Ահա թէ ինչպէս կը ներկայացնէ մեզի Մինաս Վրդ. ի սակաւապետութիւնը. «Մինաս աստուածարանութեան Վրդ. ն, կը գրէ, որ փոխանորդէր Կաթողիկոսին (Եղիազարի) եւ ծեր գոյով, երեք ամ շրջեցաւ ի մէջ Ստամպուլու, ամենեւին ի ճի ոչ նստաւ, այլ հետիոտս շրջէր անձրեւաթաց եւ ձիւնաթաթախ լինելով, որ եւ տեսողացն յայտնի: Բայց նոքա որ զԱւետիան (Եղգոկիացի) երկրորդ Լուսաւորիչ հռչակեցին, միթէ զհամեմատութիւն ինչ գտի՞նք ընդ նմա, ըստ վարուց ասեմ եւ ըստ բարուց Սրբոյ Հօրն Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին»<sup>87</sup>:

<sup>86</sup> Brosset M., ibid, p. 202. note 58:

<sup>87</sup> Անանու, Յուշեր. հմտ. Զեռ. Ս. Ղազարու, թիւ 494, թղ. 69: — Այս գրութեանը կը բովանդակէ Պոլսոյ Պատրիարքութեան 1701—1703 տարիներուն տիրահռչակ անցքերուն պատմութիւնը: Կը հասցնէ Դեկտ. ամիսի վերջերը: Գլխաւոր հերոսը այս պատումին Աւետիք Վրդ. Եղգոկիացին է, Մայրաքաղաքին Պատրիարքը: Հեղինակը ասիկա գրած է, ինչպէս կը յայտարարէ յառաջարանին մէջ, «չարժեալ յետապոստանէ թախանձանացն» եղբարց, «անձանց արժանաւորաց եւ վեհագունից հնազանդեալ յանձն առի» թէ եւ վեր էր իմ կարողութեանս, կը գրէ: Սակայն իր անունը չէ արձանագրած թէ ով է: Զեռագիրին ճակատին վրայ կայ երկրորդ անձի մը յայտարարութիւնը:

Անանու կը յետ այսպէս բնութագրելու Ամզեցիին պարզունակ եւ անինչ կենցաղը, կ'անցնի պատմել մեզի, հանդամանաւոր կերպով Աւետիքին կողմէ անոր դէմ սարքուած դատավարութիւնը: Ընթերցողը թող համեմատէ Աւետիքին ինքնակենսագրութեան հետ: Ահա իր իսկ բառերով Անանուին պատումը:

Ս. Ղազարու մատենադարանապետն է եւ կամ ան որ զըջաղէրը ձեռք ձգած է: Սա կը գրէ թէ «է յայտնի գրչութիւնս Երանելի Տէր Կոմիտասայ Նահատակի Քէօմիւրճեանց, եւ շարադրութիւնն իսկ անշուշտ նորա երեւի, յօրինեալ չորս ամօք յառաջ քան զնահատակութիւն իւր, ցաւակցելով աղէտից ազգին, որ յայն ժամանակս պառակտիչ Աւետիքեանց, եւ յորդորելով զընթերցողս ի սէր եւ ի զպատուութիւնս»:

Մինաս Վրդ. Ամզեցիին Պոլսոյ Քէօմիւրճեան ընտանիքը կը յաճարէր, նկատած նաեւ Եղիազար Այնթապցի Կթղա-ին մտերմութիւնը անոր հետ: Նա իր Օրագրութեան մէջ յաճար կ'ակնարկէ իր այս յարաբերութեանց, ինչ որ Նշանեան Եպս. մատնանշել չէ թերացած (տես ԵԶԳ, էջ ՀԼ—ՁԶ): Յատկապէս մտերմութիւն ունեցած է Տէր Կոմիտաս Քհչ. ին հետ, զոր 1701 Սեպտ. 1ին հետը Երուսաղէմ ուխտի տարաւ, եւ 1702 Փետր. 1ին դեռ հոն է. Մարտ 12ին կը հիւանդանայ Ամզեցիին, «Գ. օր եղև Կովիտասն, Նարեկ կուկարուց ի վերայ իմ» կը գրէ Օրագրութեան մէջ (Թղ. 263ա—բ):

Ս. Ղազարի յիշեալ ձեռագրին գրութեան մէջ հողեսէր քահանայի մը շունչը կայ, ճշմարտասէր եւ արդարութեան նախնաձայնիչը հեղինակի մը ոգին կը ներշնչէ: Ժամանակակից մըն է դէպքերուն, Պոլսոյ քաղաքացի, ծանօթ դերակատարներուն: Եղիազար Կթղա-ին հանդէպ համակրանքի եւ հիացումի շնչով կ'արտայայտուի, որ Քէօմիւրճեան ընտանիքին սեփական եղած է: Բայց որովհետեւ հեղինակը ինքը չէ զետեղած իր անունը, մենք ալ կը նախընտրենք առժամայէս Անանուի կոչել:

Փարիզի Մատենադարանին հայերէն ձեռագրաց բաժնին մէջ կայ 1706 թուին սոյն բնագրէն կատարուած օրինակ մը. Ֆրետ. Մազլէր ալ, որ Փարիզի հայ զըջաղիւններու ցուցակը յօրինած է, այդ օրինակին համար կը գրէ թէ հաւանօրէն Տէր Կոմիտաս է գրութեան հեղինակը:

Վիեննայի Միսիթարեանց Մատենադարանն ալ ունի օրինակ մը, 1909 թուին ընդօրինակուած Փարիզի օրինակէն (Հ. Հ. Ոսկեան, Վիեննայի Յուշակ Զեռագրաց, 1963, թիւ 1153): Հ. Օգոստինոս Վրդ. Սեբուկեան, ազնուօրէն այդ զըջաղիւն վերջին էջերուն լուսանկարը մեր տրամադրութեան տակ զբաւ. բոլորովին նոյն է Ս. Ղազարի օրինակին հետ:

Փարիզի օրինակին ընդօրինակողը եղած է Պետրոս անունով մէկը, ինչ որ Վիեննայի օրինակին ալ անցած է: Հ. Ակինեան ՀԱ. ի իր յօդուածին մէջ կը կոչէ այդ անունով: Բայց դա չէ հեղինակը գրութեան, այլ միայն օրինակողը: Կաթողիկէ Արձագանգ շարժառիթերը, 1913—1914 տարիներու թիւին մէջ հրատարակած է յիշեալ գրութեանը եւ անվերապահօրէն Տէր Կոմիտաս Քէօմիւրճեան Քահանային է, կը գրէ: Մենք կոչեցինք այդ օրինակը Յուշեր Անանուի, թէ եւ համոզուած ենք թէ Եր. Տէր Կոմիտաս Քահանային է:

ՄԻՆԱՍ ՎՐԴ. ԱՄԴԵՑԻԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Աւետիք, կը գրէ նոյնը, իր պատրիարքութիւնը սկսաւ ամբողջ շահելու քաղաքականութեամբ: Գրեց Երուսաղէմ, Տէր Մինաս Վրդ. ին «զղիւր սիրոյ եւ հարազատութեան, ասելով. Գո եմ ես որդի եւ ծառայ. նաեւ վասն օգտի քո եւ վասն օգտի Սուրբ Աթոռոյ ընկալայ զպատրիարքութիւն Իստամպուլու», որպէսզի չար մարդիկ Աթոռի չըսէին:

Առ այս Մինաս Վրդ. «զի յոյժ բարի էր գրեալ, հաճեալ ընդունեցաւ» եւ սիրալիր պատասխան տուաւ, նախ զինքը շնորհաւորելով եւ «հանդերձ ընծայիւք», թէ զքեզ իրբեւ հարազատ ունիմ ինձ» եւն.:

Պատմելով ապա այս առթիւ Ս. Յակոբայ սեւագրուխներէն, այսինքն Արեղաններէն, ոմանց զործած անառակութիւնները, եւ զգուշացնելով զԱւետիք Պատրիարք չընդունիլ զանոնք. վասնզի չտեսնուած անպատշաճ բաներ զործած են, «թողում ասել զկուրսն ընդ միմեանս» հայհոյանքներով, յիշոցներով, փետելով զմօրուս, քանդելով զատամս, այտուցանելով զաչս միմեանց, պատուելով զօճիս եւ զհանդերձս եւն. . . , որ հոս զանց կ'ընենք արտագրել:

Կարգապահութիւնը վերահաստատելու դիտմամբ, կը գրէ Անանու կը, Մինաս Վրդ. իր տեղեկագիրը կը գրէ Աւետիքին այսպէս, թէ՛ Ես հրապարակաւ Սիւնիոյս գումարեցի Ս. Յակոբի տաճարը, Եպս. ներու, Վրդ. ներու եւ Քհչ. ներու, միաբաններու եւ ժողովուրդի մասնակցութեամբ, եւ զատեցի զանոնք իբր յանցաւոր «ի սուրբ կարգս եւ ի սքեմս կրօնաւորական», եւ ասոնք կը ծանուցանեմ քեզի, որպէսզի զանոնք չընդունին: — Մինաս Վրդ. իբրեւ եղբայր՝ եղբոր կը գրէ, տեղեկ պահելու համար, որպէսզի եկեղեցական կարգապահութիւնը պահպանուի անխախտ:

Աւետիք Պատրիարք այս տեղեկագիրը առնելուն, կը գրէ Անանու կը, կը սպասէր Արեղաններու ժամանումին: Անոնք երբ Աղբիանապոլիս հասան, ուր կը գտնուէր Աւետիք, կասկածանքով ներկայացան, զիտակից անշուշտ իրենց յանցանքներուն: Բայց Աւետիք զանոնք շատ սիրալիր կերպով կ'ընդունի, պատմեցէք, ըսելով, ինչ որ Երուսաղէմ տեսած էք:

Անոնք քաջալերուած կը սկսին լալազին

ամբաստանել Մինաս Վրդ. ը, այլեւայլ բարուներ բարդելով անոր հասցէին. «Նախ զի ինքն նստէր յԱթոռով, եւ ի Փափէն եկեալ սեւագրխոցն զքարոզն ասել տայր: 2) յԵրուսաղէմայ յապրանացն եօթն ձիարեոն ապրանք եւ դրամ ի յԱճէմիտան տարաւ, ի Ս. Էջմիածին: 3) Չըուր էարկ ի սուրբ խորհուրդն յորժամ պատարագեաց ինքն: 4) ՉՓափին Լեւոնի պատկերն կանգնեաց եւ ժողովրդեան ետ երկրպագել»: 5) Սուլթանին անունը պատարագէն դուրս հանեց «զոր յառաջն յիշատակեաց»: 6) Եկեղեցոյ արծաթեղէնը վատնեց: 7) «Ձտեղիս եւ զվիճակս Հայոց ազգիս Յրանկաց ծախեաց»: 8) Պապը եւ քրիստոնեայ թագաւորները յիշել տուաւ պատարագի մէջ, «եւ միայն վասն նոցա կենդանութեան պատարագեմ ասաց»: 9) Մեզ զանակոծեց 200 հարուածով: 10) Աղուխացի բաց պատարագել տուաւ: — Այսինքն թէ՛ Գառաւորաց շրջանին խորանին վարագոյրը բաց պատարագել տուած է, հայ Եկեղեցոյ աւանդութեան դէմ, որ այդ շրջանին չեն բանար վարագոյրը, թէ եւ այս աւանդութեան բացառութիւններ ըրած են երբեմն եկեղեցական իշխանութիւնները:

Աւետիք յետ ունկնդրելու ամբաստանութեանց այս գլուխներուն, կ'ըսէ, թէ արդեօք ուրիշ վկաններու առջեւ այս ամբաստանութիւնները կ'ուզէ՞նք կրկնել, նաեւ Սուլթանի դիւանին: Անոնք՝ «Այո» կը պատասխանեն<sup>88</sup>:

Ս. Աստուածածին եկեղեցին, անշուշտ ամբաստանեալին բացակայութեամբ, ժողով մը կը գումարուի, Անանուին պատումին համաձայն: — Հոն են նաեւ Մատթէոս Սարը, Յովհաննէս Վրդ. Ամասիացի, գուցէ նաեւ Գալուստ Վրդ. Կայծակ, եւ այլ եկեղեցականներ: — Անանու կը շարունակելով իր պատումը կը գրէ. «Քանզի սուտ վկայքն այսօրիկ փառաւոր մարդիկ էին, եւ նոր մուղտիք, — հեղանքի շնչով մը, — ուստի հաւատացին» ժողովականները: Յատուկ շեշտ մըն ալ ունի Անանու կը, Մատթէոս Սարը զահագուրկ Կթղա-ին ծածուկ ծրագիրները արտայայտող, «քանզի սոքօք կամէր զինքն յառաջ արկանել յԱռաջնորդութիւն Երուսաղէմի» կը գրէ. այլ եւ Երուսաղէմի Աթոռը զբաւեւէին յետոյ ալ, Եղիազար Այնթապցիին

<sup>88</sup> Անանու, Յուշեր, թղ. 33բ—35ա: — ՉԱՄՁԵԱՆ Հ. Մ., անդ, էջ 733—734:

օրինակին վրայ, Միւսոն ալ օրհնել Երուսաղէմէն ու բաշխել եւն. : Մատթէոս Սարըին այսպիսի որոճումները կը մատնանչէ նաեւ Բարդէն Կթղս. Կիւլէսերեան իր Պատմութիւն Կիլիկիոյ Կաթողիկոսաց գիրքին մէջ<sup>89</sup> :

Անանուս կը գրէ եւս. Երբ Աւետիք վերահասու եղաւ թէ Մատթէոս Սարը ալ Երուսաղէմի Աթոռին վրայ ծրագիր ունի, գրով սպառնաց անոր որ իսկոյն հեռանայ մայրաքաղաքէն : Իսկ ինքը չարախօս չորս Արեղաներու գլուխը անցած, յետ անոնց միացնելու ուրիշ Արեղաներ ալ, եւ մի քանի երէցի գլուխը վեղար անցնել տալով, կը ներկայանայ արքունի դիւանին, աղերսագիր մը մատուցանելով ընդդէմ Մինաս Ամդեցիին : Վէզիրը՝ իրագրել թէ նախանձի արդիւնք է, մինչ կը ձգտէր իր վճիռը, Աւետիք իր ջերմ պաշտպան մեծ մուֆթին շարժման կը դնէ, որմէ յանձնարարական մը ուղղուած դէպի վէզիրը, կ'երազացնէ Աւետիքին հետապնդած յաջողութիւնը<sup>90</sup> :

Այսպէս Մինաս Ամդեցիին դահլիճեց եղաւ, Աւետիք իր մականին տակ կը կցէր նաեւ Երուսաղէմի Աթոռը, 1702ի վարդապետի նաւակատիքի օրը : Կարապետ անունով մէկը իրեն փոխանորդ կարգելով եւ դժգոհ Արեղաները կը վերադարձնէր իրենց վանքը, «գրեալ գիր առ Մինաս Պապա տեղակալ, զի ի հասանել նոցին անդր, կալեալ զՄինաս Վրդ., միայն հանդերձի գոր գգեցեալ էր, — իբրեւ թէ եղեռնագործ մը եղած ըլլար, — դիցեն շղթայիւք ի բանտի եւ մի թողցեն առնուլ ինչ յԱթոռոյ, եւ ճշդութեամբ տեսցես ընդ նմա գճաշխն» :

Սղագրեալ Օրագրութիւնը Մինաս Ամդեցիին՝ պաշտօնանկութեան թուականը 1702 Օգոստ. 19ին կը դնէ : Անշուշտ Վարդապետի նաւակատիքէն, որ Յուլիս ամսուն կը հանդիպի, մինչեւ 19 Օգոստոս ժամանակամիջո-

ցը ծառայեց Աւետիքին հրահանգները Երուսաղէմ հասցնելու<sup>91</sup> :

Անանուսն ալ նոյնը կը հաստատէ. «...զՏէր Մինաս տիեզերաց Վարդապետն Յամթեցի, որ շատ յաւուրք գոլով եւ ծերունի ի ժամանակիս, եւ էր հաստատեալ Պատրիարք սրբոյ Աթոռոյն Երուսաղէմի ի Տեառնէ Եղիազար Կթղս. է, արդ ոչ խնայելով յալիս նորա եւ իջուցեալ զնա յԱթոռոյն, եւ եղին ի բանտի, արկեալ շղթայս ի պարանոցն եւ յոտն, գրագում աւուրք տանցեալ խեղդէին, զգրամս պահանջելով ի նմանէ, զի առեալ ի նմանէ շաստուածոյն իւրեանց մատուցեն» :

Եւ շարունակելով դեռ իր պատումը, կը գրէ. «նաեւ զՏէր Սուքիաս աստուածարան Վրդ. ն, որ է աշակերտ Տեառն Եղիազարու Հայրապետին. որ սոքա երկոքեանս, — ըսել կ'ուզէ Մինաս եւ Սուքիաս Վրդ. ները, — թուի ինձ քէ իբրեւ լուսապայծառ ջախ երեւին ի մէջ յագգիս մերոյ : Քանզի յաւուրս յայտոսիկ սոքա են դերասպարիւք ի տունս Յունաց (այս է Արեւմտահայքի մէջ), թողում ասել գտունս յԱրեւելից», այսինքն նաեւ Արեւելահայքի մէջ հռչակուած դէմքեր էին, ըսել կ'ուզէ :

Ըստ այսմ՝ Մինաս Վրդ. ին բանտարկութիւնը ոչ թէ եօթը օր տեւած է, ինչպէս ոմանք պատմիչներէն գրած են, այլ շատ օրեր, կ'ըսէ Անանուսը<sup>92</sup> : Անանուսին կը ձայնակցին նաեւ Ս. Յակոբայ վանքին միաբանները եւ հայ համայնքը, Աւետիքէն սարքուած դատավարութեան յերիւրածոյ եւ ստայօղհանդամանքին :

Աստուածատուր Եպս. Տէր Յովհաննէսեանց իր ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի գիրքին մէջ, այսպէս կը ներկայացնէ Երուսաղէմի միաբաններուն հակադդեցութիւնը. Երբ հասաւ, կը գրէ, Պոլիսէն, արքունի հրամանը, այլազգի դատաւորը ժողովի հրաւիրեց Լատին, Յոյն, Ասորի համայնքներուն փոխանորդները, «եւ զհամայն միաբանս Ս. Յակոբայ եւ զժողովուրդս Հայոց», Երուսաղէմ քաղաքին : Կարգալ տուաւ արքունի հրովարտակը, եւ հար-

<sup>91</sup> Տէր Յովհաննէսեանց ԵՊՍ. Ա., անդ, հտ. Ա., էջ 420—421 : — ՆՇԱՆԵԱՆ ԵՊՍ. Մ., ԵԶԳ, էջ ձեղ — ձեղ : — ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., ՀԱ., 1960, էջ 330—331 : <sup>92</sup> Անանուս, Յուլիս, թղ. 66ա—66բ : — ՀԱ., 1960, էջ 331 : — ՈՍԿԵԱՆ Հ. Հ., ՎՅԶ, Զեռ. թիւ 1153, թղ. 26բ :

<sup>89</sup> Անանուս, Յուլիս, թղ. 35բ—36ա : — ԿԻԻԼԵՍԵՐԵԱՆ Բ., անդ, էջ 443—444 : <sup>90</sup> Անանուս, Յուլիս, թղ. 35բ—36ա : — ՉԱՄԶԵԱՆ Հ. Մ., անդ, — Տեա նաեւ Տէր Յովհաննէսեանց Եպս. Ա., Պատմութիւն Երուսաղէմի, էջ 419, ուր կ'ըսուի թէ Սաղէմեան արեղաները, որոնք Երուսաղէմէն Պոլիս դացին ամբաստանելու Մինաս Վրդ. Ամդեցիին, չորս էին : Մինչդեռ Աւետիք Պատրիարք իր ինքնակենսագրութեան մէջ 12 կը դնէ : Այդ գումարին հասուցած է նա զանոնք բազմացնելով, վարձկան վկաներ հաւաքելով Պոլսոյ շրջանակէն, ինչպէս որ Անանուսը կը բացատրէ :

ցուց դատաւորը հայ միաբաններուն թէ, «արդարեւ ա՛յլ յպէս իցէ Մինաս Վրդ. ն» : Անոնք կը պատասխանեն. Մինաս Վրդ. տասը տարիներ միաբան եղած է մեր վանքը, իբր Փոլիսնորդ եւ իբր Պատրիարք : Ուխտաւորներէն եկած նուէրները վանքին ու մեր եկեղեցիներուն նորոգութեան դործածեց, ու աղքատներուն տուաւ. «ոչ վատնեաց նա զինչս ազգին ի կամս իւր, մինչ չհոգալ զկարեւոր պէտս անձին իւրոյ, եւ հաւատարմութեամբ ծառայել անթերի կատարեաց զամենայն դործս վանաց, եւ ոչ հակամիտեալ է նորա ի Լատին կրօնս» : Ուղղամտութեան ձայնն է սա :

Այս դատավարութենէն դեռ տասը տարի առաջ, 1690 թուին, Պոլիս գրուած Յիշատակարան մը հետեւեալը ունի. «Արդ այսմ վըրտապատում եւ ի դառն ժաւհնակիս, ի Ս. Երուսաղէմ եղեալ Ս. Յակոբ վանացն վէջըլ ծերունի մահտեսի Պապայ Մինասն, որ ԽԲ. տարի էր կու սպարաւորէր Ս. Երուսաղէմայ, — ըսել կ'ուզէ վանքին աշխարհական մատակարարն էր 42 երկու տարիներ է ի վեր, — վասն ծանրանալոյ պարտուցն ի վերայ վանացն, որ ասի մինչ բճ (200) քէսէ լինել, ելեալ եկաւ յիստամպօլ քաղաքս լալով եւ հառաչանօք առ իշխանս եւ տօլլաթաւորս ազգիս Հայոց, թերեւս լիցի ճար եւ օղնութիւն պարտուց Ս. Վանացն...»<sup>93</sup> :

Ժամանակին Պատրիարքն էր Յովհաննէս Վրդ. Կ. Պոլսեցի, որ մինչեւ 1697 թուականը նստաւ Երուսաղէմի Աթոռին վրայ : Պարտքերը դոյացած էին արդէն Պապա Մինասին մատակարարութեան օրով, որ 1707ին վախճանեցաւ, մինչեւ մահը շարունակելով մատակարարել : Ժամանակակից Յիշատակագիրը կ'աւանդէ թէ պարտատէրները ու միաբանները միահամուռ պահանջած էին որ հանդուցեալ Պապա Մինասին որդեգիրը Պապա Յովհաննէս ստանձնէր վանքին վէջիւթիւնը. «եւ էր սուրբ տունս ի ներքոյ անհուն պարտուց, եւ բազում աշխատութեամբ վարէր զվէջիւթիւն» էջմիածնի Աղեքսանդր Ա. Կթղս. ի հրամանով<sup>94</sup> : Ուրեմն երբոր Մինաս Ամդեցիին Պատրիարք եղաւ պարտքերը արդէն զիջուած էին :

Դատաւորը, կը գրէ միեւնոյն պատմիչը, Ա. Եպս. Տէր Յովհաննէսեան, այս ատենա-

կան վկայութեանց հիման վրայ տեղեկագիր մը զրկեց Բ. Դուռը : Այս կը պատահէր հաւանօրէն 1702 տարիի վերջաւորութեան<sup>95</sup> :

Ուշագրաւ է Երուսաղէմի այս ատենական քննութեան աւարտին եզրափակումը, ուր կը հերքուի Պոլիս բանաձեւուած գլխաւոր ամբաստանութիւնը, նոյն ինքն վանականներուն վկայութեամբ՝ որոնք կ'ըսեն. Եւ ոչ համամիտեալ է նորա ի Լատին կրօնս : Աներկբայօրէն Աւետիքին հիմնական ամբաստանութեան դէմ է ակնարկը, թէ Ֆրանկ դարձած ըլլայ Ամդեցիին : Միակը ամբաստանութեանց որ ինքնին կը բաւէր, որպէսզի իր հովանաւոր Միւֆտին Ֆէյզուլլահ թիկունք կանգնէր վէզիրին՝ ընդունելի ընելու համար ամբաստանեալին դատապարտութիւնը : Երուսաղէմի ատենին՝ վկայելը թէ սուտ եւ յերիւրածոյ էր այս ամբաստանութիւնը, ուշագրաւ վկայութիւն մըն է թէ վկաները գիտէին զանազանել Հայաստանեայց Եկեղեցիին հարազատ ուղղափառ դաւանանքին ու լատինացման միջեւ, որ այն ատեն Ֆրանկացում բառով կ'արտայայտուէր : Ինչ որ Մինաս Վրդ. իր 1699 Դեկտ. 11 թուին առ իննովկենտիս ԺԲ. Պապը գրած թուղթին մէջ ձգտած էր, թէ իր նախնեաց օրինակին հաւատարմութիւնն էր զինքը շարժողը դէպի հաղորդակցութիւն Հոմոի Եկեղեցիին հետ :

ՄԻՆԱՍ ՎՐԴ. ԱՄԴԵՑԻԻ  
ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ

Ընթերցողը ինքնին պիտի հետեւցնէ, ցարդ ներկայացուած տուեալներէն, թէ Ամդեցիին դատապարտութեան իսկական շարժառիթը, զինքը ամբաստանողներուն եւ Աւետիք Պատրիարքի մտքին մէջ, ոչ թէ Ս. Տեղեաց ստացուածներուն վատ մատա-

<sup>95</sup> Տէր Յովհաննէսեանց ԵՊՍ. Ա., անդ, էջ 423—424 : — Հ. Մատթ. Մաղաք-Թէոփիլեանց ալ, իր Կենսագրութիւն Երեւելի արանց գրքին մէջ (Վենետիկ, 1839), համառօտ կերպով կը գրէ Մինաս Ամդեցիի մասին. «Սա ի սաղբիւյ թնամեաց իւրոց արկաւ յաթոռոյն ի 1701», եւ թէ Աւետիք Պատր. յափշտակելով Երուսաղէմի Աթոռն ալ, Կիւրոս աքսորեց եւ ուր մեռաւ, կը գրէ : Մեզի անձնօթ է թէ ուսկից առած է Կիւրոս աքսորի եւ հոն մեռնելուն ծանօթութիւնը : Յաջորդարար պիտի հաստատենք թէ Երուսաղէմ տեղի ունեցած է իր մահը :

Վերոյիշեալ կենսագիրն ալ զինքը կը բնութագրէ իբր «հեղահոգի ոմն եւ բարեկրօն եւ դրոց աշակերտ : Արդեալ ունի զքաղաքս Հայոց եւ կայսերաց». տես անդ, հտ. Ա., էջ 806 :

<sup>93</sup> ԵՅԶ, հտ. Զ., Զեռ. թիւ 1921, էջ 384 : <sup>94</sup> ԵՅԶ, հտ. Զ., էջ 387բ :

կարարութիւնն էր, այլ հիմնական տարածայնութիւն մը եկեղեցաբանական գետնի վրայ:

Ամդեցիին գիտէր իր նախնեաց հարազատ աստուածաբանութիւնը եկեղեցաբանական հարցին նկատմամբ, որ դարերու պատմական տխուր դէպքերուն հետեւանքով հայ վարդապետներու դասին մէջ տարածայնութիւն եւ պառակտում մուծած էր: Նա գիտակցաբար իր հաղորդակցութիւնը Հոռոմի եկեղեցիին հետ վերահաստատած էր: Իր կենցաղավարութեան մէջ ալ այդ կողմնորոշումը անշուշտ ծածուկ չէր կրնար մնալ: Նահապետ Կաթողիկոսին հակումներուն համաձայն էր: Այս համաձայնութեան վկայեցին, տեսանք վերադոյն, Սաչատուր Վրդ. Առաքելեան եւ օտարական Վարդապետ մը, David di S. Carlo եկեղեցականը:

Մասնանշելիք կէտ մըն է նաեւ այն որ Աւետիք հաղիւ թէ գրաւած Պոլսոյ Աթոռը, անդրանիկ թուղթին մէջ որ Նահապետ Կթղս.ին կ'ուղղէ, չուշանար ամբաստանել զՄինաս Վրդ. թէ ջրախառն բաժակով կը կատարէ Ս. Խորհուրդին մատուցումը: Միեւնոյն ամբաստանութիւնը եղած էր նաեւ Եղիազարին աշակերտ Սուքիաս Վրդ.ին դէմ<sup>96</sup>: Ուստի Մինաս Վրդ.ին համախոհները բոլորը իբրեւ «ախթարմայք» կ'ամբաստանուին, ու միեւնոյն խտտութիւնը կիրարկել կը հրամայուի անոնց հանդէպ ալ, Պապա Մինասին հաղորդուած հրահանգներուն մէջ. ընդհակառակը, այն միարանները որոնք իր տեսակէտով հաւատովն Լուսաւորչի իցեմ, անոնց հետ լաւ վարուել, կը հրամայէ Աւետիք:

Այս բոլորը լիով կը փաստէ թէ բուն շարժառիթը, առանցքը ամբաստանութեան եւ դատակնիքին կը կազմէր եկեղեցաբանական տարածայնութիւնը Աւետիքին ու Մինաս Վրդ.ներուն միջեւ: Առաջինը յաղթական ելաւ պարզապէս որովհետեւ իր կոնակը կանգնած էր ազգեցիկ Մուֆտին, որուն հոգը չէր աստուածաբանական նրբութիւնները հայ եկեղեցիին, այլ հայ քայան մնար միշտ թուրքին քայա, նաեւ իր կրօնական էն նուիրական համոզումներուն մէջ ալ:

Ս. Յակոբի միաբաններէն կայ ուրիշ ժա-

<sup>96</sup> Brosset M. Mélanges Asiatiques, t. VII, p. 225, note 101. Տէր Յովհաննէս Սեւնէճ ԵՊՍ. Ա., անդ, էջ 418—421:

մանակակից մըն ալ, որ կը հաստատէ դէպքերուն վերոյիշեալ ելքը: Դա է Յարութիւն, այլապէս նաեւ Անաստաս Եպս. Կեսարիոյ Պաղեստինացոց ճանչցուած, որ 1707ի Յունիսին վերջերը Հոռոմ ապաւինած էր, Պոլիս տիրող հալածանքներու հրեհէն, եւ 1708 Յունուար 23 թուակիրով հետեւեալը կը յայտարարէ ՀՍ.ի Ժողովին. Վաղուց կը բաղձայի Հոռոմ դալ, Ս. Առաքելոց նշխարներուն ի յարգանս: Խափանուեցայ իմ Պատրիարքիս, Մինաս Վրդ.ի կողմէ, ըլլայ Ս. Տեղեաց վրայ ունեցած պատասխանատուութիւններուս, ըլլայ նաեւ Պոլիսէն դէպի Ս. Երկիր կազմակերպելիք ուխտադնացութեանց պատճառով: Աւետիք Պատրիարք՝ թուրքին մատնեց քանի մը Եպս.ներուն հետ նաեւ Մինաս Պատրիարքը, բանտ նետել տուաւ: Ես թաքստոցի մէջ անցուցի, Պոլիս, մինչեւ Աւետիքին անկումը եւ աքսորը, որ սակայն վերադարձին, Մինաս Վրդ. վախճանած ըլլալով, դարձեալ տիրացաւ Երուսաղէմի<sup>97</sup>:

Ս. Եպս. Նշանեան, իր Օրագրութիւն Երեմիա Չելեպիի շահեկան ուսումնասիրութեան մէջ ալ<sup>98</sup> կը յիշէ այս ուշագրաւ անցքը, նոյն ինքն Մինաս Վրդ. Ամդեցիին Օրագրութիւնէն, ուր նա 1703 Փետր. 23ին գրած է. «Աւետիք Վրդ.ն մեզ դէր խրատական եւ սպանական եւ ողորակական, թէ մեք Ֆռանկ եմք դարձեր, գոր անիծեալ լիցի ամենայն հայ որ քոզու գլուսաւորչի օրէնքն եւ Ֆռանկ դառնայ. եղիցի, եղիցի»:

Նմանապէս 1691 Փետր. 14ին կը գրէ թէ Տեանընդառաջ տօնին «Երեկոյս քարոզ խօսեցաք եւ ի դաս քաշեցաք զփռանկ լինողքըն». կամ 1700 Մարտ 16ին գրածը. «Գնացի ի պատարազն ի Ս. Գէորգ, ում Ֆռանկի պէս չոքեր էր պատարազին, դաւազանաւ խթեցի զնա եւ բարկացայ իւրն»:

Նշանեան Եպս. այս անցքերը յիշատա-

<sup>97</sup> AP, SOCG. vol. 561. ff. 31, 90—92: Յարութիւն—Անաստաս Եպս. Լեւոնեան ծնած է Պոլիս: Անաստաս կոչումը Արեւմուտքի մէջ (Anastasio) գործածուած, իբր ակելի ծանօթ լատին շրջանակին: Ապրած է 1670—1738 տարիներուն մէջ: Հ. Գ. Գալէմբարեան Կենսագրութիւն Երկու Պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու (Վիեննա, 1915, էջ 135—137) անոր մասին գրած է: Իր տեղեկութիւնները սակայն կը սկսին 1712 թուականէն: Մեր տեղեկութիւնները քանի մը տարի յառաջադոյն, 1708 թուէն, երբ Աւետիքեանց հալածանքներու մղումով լքեց Պոլիսը եւ Արեւմուտք ապաւինեցաւ:

<sup>98</sup> ԵԶԳ, էջ 2է, ծանօթ. 1:

կելով, կը գրէ՝ Մինաս Ամդեցիին ալ, քրիստոնէական լայնախոհութեամբ, սիրալիք յարարութիւններ մշակած է «կաթողիկ կղերին հետ եւ նոյն իսկ պապական Աթոռին հետ, առանց սակայն հայ Առաքելական Ս. Եկեղեցոյ դաւանութենէն ու ծէսերէն չեղելու, ու ատոր համար ետքէն իբրեւ կաթողիկամիտ ամբաստանուած էր» Աւետիք Պատրիարքէն եւ (Երուսաղէմի) Աթոռէն վար առնուած:

Ս. Եպս. Նշանեան ձեռքի տակ չունէր Մինաս Ամդեցիին 1699 Դեկտ. 11ին առ իննովկենտիս ժ. Բ. ուղղած թուղթին պատճէնը: Երկրորդ՝ շիթ զաղափար ունի Հրոռոմի Աթոռին հետ եկեղեցական հաղորդակցութեան իսկական տարողութեան, որ չի պարտադրեր Ֆռանկ դառնալ, ու ծանելով Լուսաւորչի օրէնքէն: Այս զանազանութեան՝ ոչ միայն Ամդեցիին քաջատեղեակ էր, այլ նաեւ ժամանակին Ս. Յակոբի այն միաբանները որոնք վկայեցին Երուսաղէմի այլազգ կառավարչին ատեանին առջեւ թէ Մինաս Ամդեցիին, իրենց օրինաւոր Պատրիարքը, լատին չէր եղած:

ՄԻՆԱՍ ՎՐԴ. ԱՄԴԵՑԻՆ  
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԸ ԵՒ ՄԱՀԸ († 24 Նոյմ. 1704)

Յորքան Աւետիք Պոլսոյ Աթոռին վրայ էր, Մինաս Ամդեցիին արգելափակուած մնաց Երուսաղէմ, եւ պաշտօնազուրկ. բայց միշտ Պատրիարք, քանի որ իր դահլիճեցութիւնը ոչ մէկ տխուր ունէր օրինաւորութեան:

Այս շրջանը տեւած պէտք է ըլլայ 1702 Օգոստ. 19էն մինչեւ 1703 Օգոստոս 16, երբ Աւետիք, զինքը հովանաւորող մեծ մուֆտիին շնորհազրկուելով ու զլխատուելով, ինքն ալ շնորհազուրկ եղաւ, Ետի Գուլէի բանտը նախ, եւ ապա Ալրատ կղզին աքսորուած մնաց:

Կը խորհինք թէ Աւետիքին շնորհազուրկումէն յետոյ գետեղելու է Երուսաղէմ, այլազգի դատաւորին բացած ատեանը, ուսկից Մինաս Վրդ. արդարացած պիտի ելլէր, վկայութեամբը նոյն ինքն Ս. Յակոբի միաբաններուն:

Սաչատուր Վրդ. Առաքելեան, Պոլիսէն հաղորդելով քաղաքական այս յեղափոխութիւնը ՀՍ.ի Ժողովի Գարտուղարին, իր 1703 Սեպտ. 25 թուակիրով, կը գրէ թէ Մուֆտին սպաննուած է, որուն դէմ ելած են եղեր

հարիւր հազարէ ակելի ապստամբներ, թէ Աղեքսանդր Maurocordato, իր քրիստոնէութիւնը ուրացող վէզիրը փախած է, նաեւ ամէն անոնք որ կաթողիկէի ամբաստանութեամբ թիապարտութեան դատապարտուած էին՝ ազատած. Մինաս Վրդ. Ամդեցիին Երուսաղէմի Աթոռը վերադարձած է, իսկ Գալուստ Վրդ. Կայծակ Կ. Պոլիս:

Անանուց պատմիչը, ժամանակակից եւ տեղեակ մայրաքաղաքին իրադարձութեանց, նոյնը կը հաստատէ մինչ կը գրէ թէ՝ երբ Ահմէտ Գ. իր եղբորը, Մուստաֆա Բ. Սուլթանին տեղը անցաւ (1703—1730), իսկոյն զլխատել հրամայեց Ֆէյզուլլահ մուֆտին, պաշտպանը Աւետիքին. զինքն ալ Ետի Գուլէ բանտեց. իսկոյն Մինաս Վրդ. Երուսաղէմի, իսկ Գալուստ Վրդ. Կայծակ Պոլսոյ Աթոռին վրայ բազմեցան «կամակեցութեամբ Պոլսոյ մեծամեծաց»<sup>99</sup>:

Օրագրութիւն տետրին վերջին էջերը կը նշանակեն 1704 Մարտ 11ին, Մինաս Ամդեցիին վերահաստատումը իր պաշտօնին վրայ: Նոյն տարին ալ, արդէն ալեւոր, կոչիւծուած իր կրած նեղութիւններէն, հաղիւ ինը ամիս կրցաւ վարել իր պաշտօնը, զի 1704 Նոյեմբ. 24ին կնքեց իր մահականացուն:

Իր շիրմին վրայ, Ս. Փրկիչի գաւիթը, արձանագրուած է հետեւեալը. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՏԵՍԱՌ ՄԻՆԱՍՍԱՅ ԱՄԴԵՑԻՆՅ ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ՍՐԲՈՅ ԱԹՈՌՈՅՍ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՈՐ ՓՈՈՆՅԱԻ Ի ԿԵԱՆՍ ՎԵՐԻՆ Ռ Ճ Ծ Գ<sup>100</sup>:

<sup>99</sup> Անանուց, Յուշեր, թղ. 68ա: — ՉԱՄՁԵԱՆ Հ. Մ., անդ, էջ 745: — AP. SO. Armeni, vol. 5. f. 85:

<sup>100</sup> Այի՛նեԱն Հ. Ն., անդ, էջ 333: — Գէորգեան Գ., իր Ձեմուշն անիրաւուած յղուածին մէջ (Բազմ. 1964, էջ 126), յետ գրելու թէ Ամդեցիին երկիցս եւրոպա ճամբորդած է, 1684—5 եւ 1695ին, վերադարձին, կը գրէ, Սիրահայեացի վանահայրութիւնը ձեռք առաւ մինչեւ 1709 թուականը: Բայց Ամդեցիին մահուան թուականը առհասարակ 1704 Նոյեմբ. 24ին նշանակուած է, Երուսաղէմի իր շիրմին վրայ ալ: Ուստի ընդունելի չէ Հ. Այի՛նեանի վարկածը, մինչեւ 1709 ապրած ու Սիրահայեացի վանահայրութիւնը վարած ըլլալը:

Ս. Յակոբի 1921 թիւ գրչազիւրն ալ, Սաղմոսարան, էջ 191բ, Յիշատակարանը կը գրէ. «Ի ՌձԾԳ (1704) եւ Նոյեմբեր ամսոյ ԻԳ, եւ Հոռի Հայոց Լ., պատկեր օրն ուրբաթ, տասներորդ ժամուն, առ Տէր փոխեցաւ եւ մեկնեցաւ աստի կենացս Համթեցի, երջանիկ Բաբունապետ Տէր Մինաս Արճի Եպիսկոպոսն, որ էր Պատրիարք Սրբոյ Երուսաղէմի, որոյ հոգեւոյն Տէրն ողորմեցի» (ԵՅՁ, հտ. 2., էջ 387բ):

Հակառակ իր դէմ գործուած անարդարութեան եւ Աւետիքեան հալածանքին, իր պաշտօնին վրայ մահացաւ, մէկը դարուն կարկառուն հայ հողեւորականներէն, մինչեւ իր վերջին ժամերը ծառայելով Հայաստանեայց Եկեղեցիին:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԱՄԱՏՈՒՆԻ

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Կը հրատարակեմք ստորեւ Մինաս Վրդ. Աւդեցիին, 1699 Դեկտ. 11 թուակիր թուրքը, որուն միջոցաւ կը յայտնէ նա իննուվեցնտիս ժ. Պապին, իր Եկեղեցական հաղորդակցութիւնը Հռոմի Եպիսկոպոսին հետ, համերաշխօրէն իր Վեիին Ս. Էջմիածնի Նահապետ Կաթողիկոսին հետ:

(AP. SOCG. v. 539, f. 244<sup>2</sup>—244)

ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵՑԵԱԼ ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ԱՄԵՆԻՑ Ի ՔՐԻՍՏՈՍ ՀԱՒԱՏԱՅԵԼՈՑ ԵՒ ԳԵՐԱԿԱՏԱՐ ԳԼՈՒԽ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԻՆՆՕՋԷՆՑԻՈՍ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՊ

Այսու նամակաւ ձոնեմք Սրբութեան Ձերում զՅիսուսաւանդ ողջոյն, զորդիական երկրպագութիւն, զնշան մեծի եւ կատարելագունի հնազանդութեան, եւ զառհաւատչեայ սիրոյ անպատմելոյ եւ անճառելոյ, որով սիրեմք զՍրբութիւն Ձեր:

Ի բազում ժամանակէ ամենամեծ տենջմամբ փափագէաք յայտ առնել Սրբութեան Ձերում զվերոյիշեցեալ զիդճս սրտի մերոյ, սակայն չգտ(ե)ալ զառիթ մնայաք արդէլեալք: Բայց արդ ի քաղցրանալ Աստուծոյ ի վերայ մեր, գտեալք զառիթ ամենամեծ բերկրութեամբ յօժարեցաք եւ ախորժեցաք, հաճեցաք կատարել զփափագ սրտի մերոյ: Յորժամ նամակ Սրբութեան Ձերոյ երջանկապէս ժամանեաց ի մայրաքաղաքս յայս Կոստանդինուպօլիս, սիրելի որդին Ձեր, զովեցեալն ի Սրբութենէ Ձերմէ, հաւատարիմ եւ հարազատ բարեկամն մեր, Պաշտուր Վարդապետն, խորհրդաբար զեկոյց ինձ զամենեսան, որք պարունակեցեալք էին ի նամակի Սրբութեան Ձերոյ, յայնժամ ամենամեծ ուրախութեամբ զուարճացեալ բերկրեցաւ սիրտ մեր: Վասն որոյ փութով զսիրելի որդին Ձեր եւ մեր, հանդերձ պատուական նա-

մակաւ առաքեցաք առ վերյարգեցեալ եղբայրն մեր Նահապետ, Ամենայն Հայոց Կաթողիկոսն, ջերմաբար զնա յանձնելով նմա, եւ ժտութեամբ ի նմանէ խնդրելով զի փութով կատարեալ զգործառութիւն նորին, զնա շուտով առ մեզ վերառաքեսցէ:

Օղնականութեամբ ամենազուրկին Աստուծոյ, ամենայն ինչ փութով ըստ հաճոյից Ձերոց կատարեցաւ, որպէս յայտ է ի նամակէ վերյարգելի եղբոր մերոյ, որ ուղղեցեալ է առ Սրբութիւն Ձեր, եւ ի դրոց սիրելի որդւոյ մերոյ Պաշտուր Վարդապետի, առ Սուրբ Ժողովն յղեցելոյ, յորժամ սիրելի որդին մեր դարձաւ առ մեզ եւ պատմեաց զամենայն եղեալն, վերստին հրճուեցաւ եւ ցնծացաւ սիրտ մեր, եւ ըմբոն համարեցաք զգիրտ մեր, եւ դտեալք զպատշաճաւորութիւն, յօժարութեամբ զրեցաք:

Աստանօր ոչ միայն հաստատեմք զգրեցեալն ի վերյարգելի եղբորէ մերմէ Նահապետէ, այլ եւ բացայայտեմք եւ բացատրեմք զգրեցեալն ի նմանէ: Սակա որոյ ծանուցանեմք Սրբութեան Ձերում, զի թէպէտ եղեն ոմանք, որք այլեւայլ խօսեցեալք իցեն ընդդէմ Առաքելականի Աթոռոյ, սակայն սոյնպիսիքն ի մէնջ չեն ընդունեցեալք, այլ բացահերքեալք: Վասնզի մեք կամք հաստատունք ի նոյնում դաւանութեան եւ միաբանութեան, զոր արարին Սուրբն Սեղբեստրոս, ծայրագոյն Հայրապետն Հոսովայ, եւ Սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր: Վասնզի դաւանիմք զսրբազան Առաքելն Պետրոս փոխանորդ Քրիստոսի ի վերայ բոլոր Եկեղեցւոյ նորին, զլուխ եւ իշխան Առաքելոց սրբոց, վէճ անվանելի ի դրանց զժողոջ, ծայրագոյն հովիւ հօտին Քրիստոսի, վէճ Եկեղեցւոյ սրբոյ, Առաքել որում յանձնեցան ոչխարք եւ զառինք Յիսուսի, եւ որոյ ոչ պակասեցաւ հաւատն ըստ բանիցն Յիսուսի, եւ ժառանգող բալանեաց արքայութեան երկնից:

Դաւանիմք եւս զՎեհապետն Հոսովայ ճշմարիտ (յ)աջորդ գլխաւոր Առաքելոյն Պետրոսի, զլուխ ամենայն հաւատացելոց եւ քրիստոնէից, եպիսկոպոսապետ ամենայն եպիսկոպոսաց, Հայրապետ ամենայն Պատրիարդաց, զլուխ ամենայն Սիւնհոգոսաց, ծայրագոյն Հայր ամենայն հաւատացելոց, ծայրագոյն դատաւոր ի մէջ Եկեղեցւոյ սրբոյ, եւ ընդհանրական Վարդապետ բոլոր Եկեղեցւոյն Քրիստոսի:

Դաւանիմք եւս յամենասուրբ Երրորդութեան զերիս անձինս եւ զմի աստուածութիւն, զՀայր ծնող, զՈրդին ի Հօրէ ծնեալ, եւ զՀոգին Սուրբ, զովով սէր Հօր եւ Որդւոյ, ի Հօրէ եւ ի յՈրդւոյ իբրեւ ի միով սկզբանէ բղխեցեալ:

Դաւանիմք եւս ի մի անձին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ է մի Տէր, մի անձն, մի դէմ, զերկու կատարեալ բնութիւնս, այսինքն կատարեալ աստուածութիւն եւ զկատարեալ մարդկութիւն, անքակտելի անձնաւորական միաւորութեամբ անչիոթաբար միաւորեցեալս, նաեւ զերկու կամս եւ զերկու ներգործութիւնս, ոչ միմեանց հակառակս, այլ միաբանս:

Դաւանիմք եւս թէ Սուրբ կան առաջի Աստուծոյ հոգւովք փառաւորեցեալք, իսկ անդեղք՝ թշնամիք Աստուծոյ, հոգւովք դատապարտեցեալք են ի դժոխս, զայց որք չեն վճարեալք զպաշխարանս, կամ եղեալք են ի կենացս աստի միայն ներելի մեղօք, մաքրին սոքա եւ վճարին զվերամնացեալ ապաշխարանս, կամ մատուցմամբ պատարագաց, կամ բաշխմամբ տրոց եւ ողորմութեանց, կամ ի ձեռն այլոց սոյնպիսի բարեպաշտակաց գործոց, կամ ի ձեռն քաւչական հրոյ, որպէս ասէ Առաքելն:

Բաց ի յասացելոց առանձնական դատաստանէ, դաւանիմք եւս զընդհանրական դատաստան, յորում հանդիսաւորապէս ընդունելոցք են արդարք զլիակատար փառս յաւիտենականս, եւ մեղաւորս զլիակատար պատիժս մշտնջենաւորս:

Վերջապէս ընդունիմք զայն ամենայն, զոր ընդունի սուրբ Եկեղեցին Հոսովայ, եւ հերքեմք զայն ամենայն զոր նա բացահերքէ: Յորմէ յայտ է թէ քաջապէս վերահաստատեմք զմիութիւն եւ զմիաբանութիւն, պահանջեցեալն ի Սրբութենէ Ձերմէ, եւ ընդունեցեալն ի վերյարգելի եղբորէ մերմէ Նահապետէ:

Ձայս արարաք հետեւեալք սրբոց նախնեաց մերոց, որգոն Լուսաւորչի, Որդւոց եւ թոռանց նորին, Ներսեսի Շնորհալույ, Գրիգորի Նարեկացւոյ, Ներսեսի Լամբրօնացւոյ, եւ այլոց սրբոց Հարցն մերոց հնազանդեցելոց Հոսովականի Եկեղեցւոյ:

Սակայն ես յօժարութեամբ խոստովանիմ զպակասութիւն իմ, որով ի յանցեալ ժամանակս պակասեալ եմ յայսմիկ մասի կամ ի

տգիտութենէ, կամ ի ծուլութենէ զննելոյ զճշմարիտն, կամ ի համարմանէ որով համարէի զիս հետեւիլ շաւղաց Նախահարց: Ուստի աղերսմամբ հայցեմ զներումն եւ զարձակումն ի յԱռաքելական Աթոռոյ, միջնորդութեամբ նամակի եւ օրհնութեամբ առաքելականի: Ուստի վերամնայ զի Սրբութեան Ձեր հաճեցեալ արժանապատուեսցէ եւ զմեզ առաքելականաւ նամակաւ, որում ամենամեծ տենջմամբ մնամք սպասողք. եւ զրեցէ վասն մեր առ յատինացիս, որք են ի յերուսաղէմ, զի աճեցուցանիցեն զսէրն եւ զսիրելութիւն, զոր ունին առ մեզ:

Արդ հայցեմք ի բարեբարէն եւ ի մարդասիրէն Աստուծոյ, զի զՍրբութիւն Ձեր պահեսցէ ընդ երկայն աւուրս ի պարծանս մեր եւ ամենայն հաւատացելոց, զհայրական սէրն զոր եցոյց մեզ Սրբութիւն Ձեր եւ առ Ազգն մեր, վարձատրեսցէ երկայնովք բարեօք զհայրապետական Աթոռսն Ձեր անփորձ եւ անսասան պահեսցէ, զսէրն զոր ունի առ Ազգն մեր, օրըստօրէ աճեցուցէ զմիութիւն եւ զմիաբանութիւն, զոր հաճեցաւ ունիլ առ մեզ եւ ընդ Ազգին մերում, եւ զորն մեք յօժարութեամբ կամեցաք եւ ընդունեցաք մշտնջենաւորացուցէ:

Հայցեմք ի Սրբութենէ Ձերմէ, զի զմեզ եւ զորդիս մեր, զորս հայրական սիրով ընդունեցաք եւ արժանաւորեցաւ ունել ի յառաքելական ծոց իւր, առաքելական օրհնութեամբ պատասպարեսցէ:

Յանձն առնեմք եւս զԱթոռ հայրապետութեան մերոյ հզօրագոյն նախախնամութեան Ձերում եւ զովով սպասողք հայրական խնամատրութեան Ձերում, մնամք հաճոյից Սրբութեան Ձերոյ:

Ձերմեռանդագոյն եւ հպատագոյն ծառայ մշտնջենաւոր Մինաս Եպիսկոպոս Վերատեսուչ Սուրբ Աթոռոյն Առաքելոյն Յակոբայ որ ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի Վիճակ Ազգին Հայոց, նաեւ ամենայն հնազանդեալքն իմ ընդ ինեւ:

Ի Կոստանդինուպօլիս յամի Տեառն 1699 Դեկտեմբերի 11

